

**«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ**

**Ֆինանսական հաշվետվություններ**

**2009թ. դեկտեմբերի 31-ին  
ավարտված տարվա համար**

## Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն .....	3
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն .....	5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն .....	6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն .....	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն .....	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ .....	9
1 Նախապատմություն .....	9
2 Պատրաստման հիմունքներ.....	9
3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն .....	10
4 Չուտ տոկոսային եկամուտ .....	22
5 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ .....	22
6 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս.....	23
7 Չուտ շահույթ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից .....	23
8 Չուտ շահույթ (վնաս) փոխարժեքային տարբերություններից .....	23
9 Չուտ շահույթ վաճառքի համար մատչելի ակտիվներից .....	23
10 Ընդհանուր վարչական ծախսեր.....	24
11 Շահութահարկի գծով ծախս .....	24
12 ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ.....	26
13 Բանկերում տեղաբաշխված միջոցներ .....	27
14 Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ .....	28
15 Հաճախորդներին տրված վարկեր .....	30
16 Վաճառքի համար մատչելի ակտիվներ .....	39
17 Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ .....	39
18 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ .....	40
19 Այլ ակտիվներ.....	41
20 Բանկերի ավանդներ և մնացորդներ .....	41
21 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ .....	42
22 Այլ փոխառություններ .....	42
23 Այլ պարտավորություններ .....	42
24 Բաժնետիրական կապիտալ .....	43
25 Վերլուծություն ըստ սեգմենտների .....	43
26 Ռիսկերի կառավարում .....	47
27 Կապիտալի կառավարում .....	54
28 Պարտավորվածություններ .....	55
29 Գործառնական վարձակալություն .....	55
30 Պայմանական դեպքեր.....	56
31 Գործարքներ կապակցված կողմերի հետ .....	57
32 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ .....	59
33 Ֆինանսական գործիքների իրական արժեք .....	59
34 Միջին արդյունավետ տոկոսադրույքներ .....	61
35 Ժամկետայնության վերլուծություն .....	62
36 Ակտիվները և պարտավորություններն ըստ արժույթների .....	64



**KPMG Armenia cjsc**  
8th floor, Erebuni Plaza Business Center,  
26/1 Vazgen Sargsyan Street  
Yerevan 0010, Armenia

**Քեյ-Փի-Էն-Ջի Արմենիա ՓԲԸ**  
ՀՀ, Երևան, 0010  
Վ.Սարգսյանի փ. 26/1,  
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն,  
8-րդ հարկ

Telephone Դեռախոս + 374 (10) 566 762  
Fax Ֆաքս + 374 (10) 566 762  
Internet Ինտերնետ [www.kpmg.am](http://www.kpmg.am)

## Անկախ աուդիտորական եզրակացություն

«Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ  
Տնօրենների խորհրդին

### Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Բանկ») կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2009թ., հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական ծանոթագրությունները:

#### *Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Սույն ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Այս պատասխանատվությունն ենթադրում է սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար տեղին ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդրում և վարում: Այս պատասխանատվությունն ենթադրում է նաև համապատասխան հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն և կիրառություն, ինչպես նաև ողջամիտ հաշվապահական գնահատականների օգտագործում:

#### *Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի համապատասխան պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների նպատակահարմարության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր կարծիքի հիմք հանդիսանալու համար:

**Եզրակացություն**

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2009թ., ինչպես նաև նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

*pp S. Ghaz*

Էնդրյու Քոքսեյ  
Տնօրեն

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ  
23 ապրիլի 2010թ.



*S. Ghaz*  
Հակոբ Հաբոբյանյան  
Մենեջեր, Աուդիտի բաժին

*«Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ  
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն  
2009թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

	Ծնթգ.	2009թ. հազ. դրամ	2008թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ	4	10,154,979	9,160,399
Տոկոսային ծախս	4	(2,536,646)	(1,523,654)
<b>Զուտ տոկոսային եկամուտ</b>		<b>7,618,333</b>	<b>7,636,745</b>
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	5	2,118,246	2,191,802
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	6	(306,720)	(283,535)
<b>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ</b>		<b>1,811,526</b>	<b>1,908,267</b>
Զուտ շահույթ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	7	106,551	63,284
Զուտ շահույթ (վնաս) փոխարժեքային տարբերություններից	8	(170,333)	1,569,944
Զուտ շահույթ վաճառքի համար մատչելի ակտիվներից	9	81,845	116,687
Այլ գործառնական եկամուտ		167,998	86,430
Այլ գործառնական ծախսեր		(133,105)	(101,876)
<b>Գործառնական եկամուտ</b>		<b>9,482,815</b>	<b>11,279,481</b>
Արժեզրկումից կորուստներ	15	(403,754)	(157,827)
Ընդհանուր վարչական ծախսեր	10	(6,528,274)	(6,152,385)
<b>Շահույթ մինչև հարկումը</b>		<b>2,550,787</b>	<b>4,969,269</b>
Շահութահարկի գծով ծախս	11	(934,005)	(1,055,413)
<b>Շահույթ</b>		<b>1,616,782</b>	<b>3,913,856</b>
<b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</b>			
Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ			
- Վաճառքի համար մատչելի ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հարկերի		41,024	38,146
- Շահույթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հարկերի		(67,616)	(35,427)
<b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց հարկերի</b>		<b>(26,592)</b>	<b>2,719</b>
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>1,590,190</b>	<b>3,916,575</b>

5-ից 64-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Բանկի խորհրդի կողմից: Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Բանկի Ղեկավարության կողմից 2010թ. ապրիլի 23-ին:

Իրինա Մելանյան  
Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար



Աստղիկ Դրամբյան  
Գլխավոր հաշվապահ

*«Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ  
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն  
2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*

	<b>Ծնթգ.</b>	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>			
Դրամական միջոցներ		6,056,296	4,103,680
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	12	13,782,768	12,205,318
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	13	35,812,145	17,308,288
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ			
- Բանկի կողմից պահվող	14	769,386	255,403
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	14	67,409	562,874
Հաճախորդներին տրված վարկեր	15	65,270,512	72,945,634
Վաճառքի համար մատչելի ակտիվներ			
- Բանկի կողմից պահվող	16	4,991,456	576,967
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	16	3,350,259	7,536,745
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ			
- Բանկի կողմից պահվող	17	96,988	607,368
Ընթացիկ հարկային ակտիվ		144,259	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	18	4,851,160	4,743,654
Այլ ակտիվներ	19	563,182	972,912
		<b>135,755,820</b>	<b>121,818,843</b>
<b>ԸՆՊԱՄՆՆՆ ակտիվներ</b>			
<b>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
Բանկերի ավանդներ և մնացորդներ	20	4,132,421	18,595,323
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	21	111,387,686	85,574,728
Այլ փոխառություններ	22	1,086,795	-
Ընթացիկ հարկային պարտավորություն		-	299,499
Հետաձգված հարկային պարտավորություն	11	508,415	160,970
Այլ պարտավորություններ	23	1,540,924	1,678,934
		<b>118,656,241</b>	<b>106,309,454</b>
<b>ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ</b>			
Բաժնետիրական կապիտալ	24	7,556,560	2,437,600
Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ		(30,052)	(3,460)
Չբաշխված շահույթ		9,573,071	13,075,249
		<b>17,099,579</b>	<b>15,509,389</b>
<b>ԸՆՊԱՄՆՆՆ սեփական կապիտալ</b>		<b>17,099,579</b>	<b>15,509,389</b>
<b>ԸՆՊԱՄՆՆՆ պարտավորություններ և սեփական կապիտալ</b>		<b>135,755,820</b>	<b>121,818,843</b>

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
<b>ԳՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ</b>		
Ստացված տոկոսներ	9,926,491	9,169,453
Վճարված տոկոսներ	(2,205,611)	(1,322,455)
Ստացված գուտ կոմիսիոն և այլ վճարներ	2,077,254	2,222,400
Վճարված գուտ կոմիսիոն և այլ վճարներ	(299,793)	(249,834)
Ջուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից	1,786,757	1,348,702
Ջուտ մուտքեր շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	130,083	739
Ջուտ մուտքեր վաճառքի համար մատչելի ակտիվներից	81,845	116,687
Ջուտ այլ եկամուտ (ծախսեր)	43,635	(6,081)
Ընդհանուր վարչական ծախսերի վճարում	(5,502,899)	(5,498,110)
<b>Գործառնական ակտիվների (աճ) նվազում</b>		
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	(13,567,708)	(653,916)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	(43,880)	(212,211)
Հաճախորդներին տրված վարկեր	15,281,043	(20,512,702)
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	(199,108)	10,912,715
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	499,733	1,346,441
Այլ ակտիվներ	118,325	618,388
<b>Գործառնական պարտավորությունների աճ (նվազում)</b>		
Բանկերի ավանդներ և մնացորդներ	(14,828,165)	10,401,853
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	6,783,761	2,913,769
Այլ պարտավորություններ	481,171	131,578
<b>Դրամական միջոցների գուտ հոսքեր գործառնական գործունեությունից՝ նախքան շահութահարկի վճարումը</b>	<b>562,934</b>	<b>10,727,416</b>
Վճարված շահութահարկ	(1,023,670)	(803,773)
<b>Գործառնական գործունեությունից ստացված (գործառնական գործունեությամբ օգտագործված) դրամական միջոցների հոսքեր</b>	<b>(460,736)</b>	<b>9,923,643</b>
<b>ԳՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ</b>		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումներ	(906,325)	(2,031,207)
Հիմնական միջոցների վաճառք	11,182	2,564
<b>Ներդրումային գործունեությամբ օգտագործված դրամական միջոցների հոսքեր</b>	<b>(895,143)</b>	<b>(2,028,643)</b>
<b>ԳՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ</b>		
Ջուտ մուտքեր այլ փոխառություններից	1,000,000	-
<b>Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից</b>	<b>1,000,000</b>	<b>-</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ (նվազում)</b>	<b>(355,879)</b>	<b>7,895,000</b>
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	8,549,169	(241,816)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեկան դրությամբ	32,363,855	24,710,671
<b>Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեկան դրությամբ</b>	<b>40,557,145</b>	<b>32,363,855</b>
32	<b>40,557,145</b>	<b>32,363,855</b>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

*«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ  
Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն  
2009թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

	<b>Բաժնետիրական կապիտալ հազ. դրամ</b>	<b>Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ հազ. դրամ</b>	<b>Չբաշխված շահույթ հազ. դրամ</b>	<b>Ընդամենը սեփական կապիտալ հազ. դրամ</b>
<b>Մնացորդը առ 1 հունվարի 2008թ.</b>	<b>2,437,600</b>	<b>(6,179)</b>	<b>9,161,393</b>	<b>11,592,814</b>
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք</b>				
Շահույթ	-	-	3,913,856	3,913,856
<b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</b>				
Վաճառքի համար մատչելի ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հարկերի	-	38,146	-	38,146
Շահույթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հարկերի	-	(35,427)	-	(35,427)
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	2,719	-	2,719
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք</b>	<b>-</b>	<b>2,719</b>	<b>3,913,856</b>	<b>3,916,575</b>
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2008թ.</b>	<b>2,437,600</b>	<b>(3,460)</b>	<b>13,075,249</b>	<b>15,509,389</b>
<b>Մնացորդը առ 1 հունվարի 2009թ.</b>	<b>2,437,600</b>	<b>(3,460)</b>	<b>13,075,249</b>	<b>15,509,389</b>
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք</b>				
Շահույթ	-	-	1,616,782	1,616,782
<b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</b>				
Վաճառքի համար մատչելի ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հարկերի	-	41,024	-	41,024
Շահույթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հարկերի	-	(67,616)	-	(67,616)
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	(26,592)	-	(26,592)
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք</b>	<b>-</b>	<b>(26,592)</b>	<b>1,616,782</b>	<b>1,590,190</b>
Չբաշխված շահույթի վերադասակարգում բաժնետիրական կապիտալի	5,118,960	-	(5,118,960)	-
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2009թ.</b>	<b>7,556,560</b>	<b>(30,052)</b>	<b>9,573,071</b>	<b>17,099,579</b>

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## 1 Նախապատմություն

### Հիմնական գործունեությունը

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ») Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է որպես փակ բաժնետիրական ընկերություն 1995թ-ին: Բանկը տրամադրում է ֆինանսական և բանկային ծառայությունների լայն ընտրանի և գործում է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում տեղակայված գլխամասային գրասենյակի ու մասնաճյուղերի միջոցով: 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ուներ 7 մասնաճյուղ: Տարվա ընթացքում Բանկի աշխատակիցների միջին թիվը կազմում էր 377 (2008թ-ին՝ 393):

### Բաժնետերեր

Բանկի սեփականատերերն են Էյչ-Էս-Բի-Սի Յուրդի Բի Վի (70%) և Ուինգս Իստաբլիշմենթ (30%):

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 31-ում:

### Հայաստանի գործարար միջավայր

Հայաստանում տեղի են ունեցել քաղաքական և տնտեսական փոփոխություններ, որոնք ազդեցություն են ունեցել և կշարունակեն ազդեցություն ունենալ այս միջավայրում գործող ձեռնարկությունների գործունեության վրա: Հետևաբար, Հայաստանի գործարար միջավայրում ծավալած գործունեությանը հատուկ են ռիսկեր, որոնք բնորոշ չեն այլ շուկաներին: Ի լրումն, կապիտալի և վարկային շուկաներում վերջերս դիտվող ճգնաժամը ավելի է բարձրացրել տնտեսական անորոշության մակարդակը գործարար միջավայրում: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի ֆինանսական վիճակի և գործառնությունների վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

## 2 Պատրաստման հիմունքներ

### Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

### Զափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների և վաճառքի համար մատչելի ակտիվների, որոնք ներկայացված են իրական արժեքով, ինչպես նաև հողի ու շենքերի, որոնք արտացոլված են վերագնահատված արժեքով:

### **Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ**

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»): Դեկավարության կողմից Բանկի համար ֆունկցիոնալ արժույթ է սահմանվել դրամը, քանի որ վերջինս արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը: Դրամը հանդիսանում է մասն առյ՛ն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

### **Գնահատումների և դատողությունների օգտագործում**

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար դեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես մասն առյ՛ն պայմանական պարտավորությունների ու ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Մասնավորապես, հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման և կարևոր դատողությունների հետ կապված զգալի անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում՝

- վարկերի արժեզրկման գնահատում - ծանոթագրություն 15
- հողի և շենքերի վերագնահատում - ծանոթագրություն 18:

## **3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հետևողականորեն կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները նկարագրված են սույն ծանոթագրության վերջում:

### **Արտարժույթով գործարքներ**

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են համապատասխան ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային միավորների գծով փոխարժեքային տարբերություններից ստացված շահույթը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի ընթացքում վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Փոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների փոխարկման արդյունքում առաջացած տարբերությունների, որոնք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Սկզբնական արժեքով ներկայացված,

արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Տարեվերջի դրությամբ սահմանված պաշտոնական փոխարժեքը կազմել է՝ 377.89 դրամ = 1 ԱՄՆ դոլար (2008թ-ին՝ 306.73 դրամ = 1 ԱՄՆ դոլար):

### **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Բանկի կողմից դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցները, ՀՀ կենտրոնական բանկում (ՀՀ ԿԲ) տեղաբաշխված միջոցները, բացառությամբ ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված այն ավանդների, որոնք գրավադրված են բանկային քարտերով գործառնությունների իրականացման համար, և թղթակից բանկերում ունեցած նոստրո հաշիվները: ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված նվազագույն պահուստը համարվում է դրամական միջոցների համարժեք, քանի որ վերջինիցս միջոցների ելքագրումը չի սահմանափակվում:

### **Ֆինանսական գործիքներ**

#### ***Դասակարգում***

*Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները, իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք՝*

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ,
- հանդիսանում են ածանցյալ ֆինանսական գործիք (բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք նախատեսված են և հանդիսանում են արդյունավետ հեջավորման գործիքներ), կամ
- սկզբնական ճանաչման պահին Բանկի կողմից նախատեսվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ստորև ներկայացված պայմաններից մեկի բավարարման դեպքում:

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում և գնահատվում են իրական արժեքի հիմունքով,
- նախատեսումը վերացնում կամ էականորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունները, որոնք կառաջանային այլ հանգամանքներում, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն:

Պոտենցիալ բարենպաստ պայմաններ ենթադրող (դրական իրական արժեք) առևտրային նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Պոտենցիալ ոչ բարենպաստ պայմաններ ենթադրող (բացասական իրական արժեք) առևտրային նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

*Տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը* ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք չունեն գնանշվող շուկայական գին գործող շուկայում, բացառությամբ այն գործիքների՝

- որոնց Բանկը մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- որոնց Բանկը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Բանկը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնց գծով Բանկը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարումնակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

*Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները* ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Բանկը մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ այն ներդրումների՝

- որոնց սկզբնական ճանաչման պահին Բանկը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Բանկը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք համապատասխանում են տրամադրված վարկերի ու դեբիտորական պարտքերի սահմանմանը:

*Վաճառքի համար մատչելի ակտիվներն* իրենցից ներկայացնում են այնպիսի ֆինանսական ակտիվներ, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես տրամադրված վարկեր ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

Ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը դեկլարությունը որոշում է սկզբնական ճանաչման պահին: Ածանցյալ ֆինանսական գործիքները և որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ նախատեսված գործիքները սկզբնական ճանաչման պահին չեն վերդասակարգվում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից: Ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է վարկերի և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող է վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների դասից, եթե կազմակերպությունը մտադիր է և ի վիճակի է պահել այդ գործիքները մոտ ապագայում կամ մինչև մարման ժամկետը: Այլ ֆինանսական գործիքները կարող են վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից միայն հազվագյուտ հանգամանքներում: Հազվագյուտ հանգամանքներն ի հայտ են գալիս եզակի արտասովոր դեպքի արդյունքում, և գրեթե անհավանական է, որ այն կրկին տեղի կունենա մոտ ապագայում:

## ***Ճանաչում***

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Բանկը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

## **Չափում**

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով, իսկ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- բաժնային գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշվող շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով ներկայացված ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապահովման պահանջները: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հավելվածները և գեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե դիտարկելի շուկայական տվյալների հիման վրա կատարած գնահատումը վկայում է սկզբնական ճանաչման պահին արժեքի համեմատ ակտիվի կամ պարտավորության իրական արժեքի աճի կամ նվազման մասին, ապա այդ աճից/նվազումից ստացված շահույթը կամ վնասը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում: Եթե սկզբնական շահույթի կամ վնասի գումարը գնահատվում է հիմք ընդունելով ոչ միայն դիտարկելի շուկայական տվյալները, ապա այս շահույթը կամ վնասը համարվում է հետաձգված և համապատասխան հիմունքով ճանաչվում է ակտիվի կամ պարտավորության օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կամ ճանաչվում է շուկայական տվյալների դիտարկելի դառնալու, կամ ակտիվի կամ պարտավորության օտարման պահին:

## **Իրական արժեքի չափման սկզբունքներ**

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշվող շուկայական գնի վրա՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Եթե գնանշվող շուկայական գինը առկա չէ, գործիքի իրական արժեքը որոշվում է գնահատման մեթոդիկաների միջոցով՝ որպես մուտքային տվյալներ առավելագույնս օգտագործելով շուկայական տվյալները: Գնահատման նման մեթոդիկաները ներառում են հղումը շուկայում վերջերս կատարված «անկախ կողմերի միջև գործարքներին», մեկ այլ էականորեն չտարբերվող գործիքի ընթացիկ շուկայական արժեքներին, գեղչված դրամական միջոցների հոսքերին և օպցիոնների գնորոշման մոդելներին, ինչպես նաև այլ մեթոդիկաներին, որոնք սովորաբար օգտագործվում են շուկայի մասնակիցների կողմից գործիքի գինը որոշելու համար:

Դրամական միջոցների գեղջված հոսքերի մեթոդիկայի օգտագործման դեպքում դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը հիմնվում են դեկավարության գնահատականի վրա, իսկ գեղջման դրույքը նմանատիպ պայմաններով գործիքի համար կիրառվող շուկայական համապատասխան տոկոսադրույքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Գնորոշման մոդելների կիրառման դեպքում, մոդելում օգտագործվում են հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական տվյալները:

Բորսաներում չըջանառվող ածանցյալ գործիքների իրական արժեքը գնահատվում է այն գումարի չափով, որը Բանկը կստանա կամ կվճարի հաշվետու ամսաթվի դրությամբ պայմանագրի գործողությունը դադարեցնելու դեպքում՝ հաշվի առնելով շուկայի ներկա պայմանները, ներկա պահին պայմանագրային կողմերի վճարունակությունը և իր սեփական վարկային ռիսկը:

### **Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս**

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- շահույթի կամ վնասի կազմում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է սեփական կապիտալում՝ որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ ստացվելու ժամանակ և հաշվարկվում են կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթի կամ վնասի կազմում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև՝ ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

### **Ապաճանաչում**

Ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, երբ ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու իրավունքների գործողության ժամկետը լրացել է կամ երբ Բանկը փոխանցել է ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները: Բոլոր իրավունքները կամ պարտավորությունները, որոնք առաջացել կամ պահպանվել են փոխանցման ժամանակ, ճանաչվում են առանձին՝ որպես ակտիվներ կամ պարտավորություններ: Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում է:

Բանկը որոշ ակտիվներ ապաճանաչում է նաև այն դեպքում, երբ դուրս է գրում անհավաքագրելի ճանաչված ակտիվներին վերաբերող մնացորդները:

### **Հետզնման և հակադարձ հետզնման պայմանագրեր**

Վաճառքի և հետզնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է ռեպո գործարքների գծով վճարվելիք գումարների կազմում՝ «Բանկերի ավանդներ և մնացորդներ» կամ «Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ» հոդվածներում՝ ըստ կիրառելիության: Վաճառքի և հետզնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետզնման պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ՝ «Բանկերում տեղաբաշխված միջոցներ» կամ «Հաճախորդներին տրված վարկեր» հոդվածներում՝ ըստ կիրառելիության: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառք նախատեսող պայմանագրի շրջանակներում գնված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրային նպատակներով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

### **Հաշվանցում**

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով գուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

### **Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ հողի և շենքերի, որոնք արտացոլված են վերագնահատված արժեքով, ինչպես ներկայացված է ստորև:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

### **Վերագնահատում**

Հողը և շենքերն ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակա հողի և շենքերի իրական արժեքների շարժից: Երբ հողի և շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ ուղղակիորեն սեփական կապիտալում: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Երբ հողի և շենքի հաշվեկշռային արժեքը

վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում:  
Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես  
այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների  
արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

### **Մաշվածություն**

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին  
հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար  
ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի  
ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս  
կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Վարձակալված միջոցների վրա  
կատարված կապիտալ ներդրումների գծով մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի  
օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության գործողության ժամկետից  
նվազագույնի ընթացքում: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Օգտակար  
ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

– շենքեր	20 տարի
– վարձակալված միջոցների գծով կատարած կապիտալ ներդրումներ	մինչև 10 տարի
– փոխադրամիջոցներ	5 տարի
– համակարգիչային սարքավորումներ	3-ից 7 տարի
– այլ	5 տարի

### **Ոչ նյութական ակտիվներ**

Բանկի կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական  
արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին  
հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար  
ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները  
հետևյալն են.

– համակարգչային ծրագրեր	3-ից 5 տարի
– այլ	10 տարի

### **Արժեզրկում**

#### **Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ**

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում  
են վարկերը և այլ դեբիտորական պարտքերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Բանկը  
վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով  
գնահատելու նպատակով: Վարկը կամ դեբիտորական պարտքը արժեզրկվում է, և  
արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է  
անկողմնակալ վկայություն սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի  
դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին, և այդ դեպքը (կամ դեպքերը)  
ազդեցություն ունի վարկի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա,  
որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել  
պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից,  
վարկային պայմանագրի պայմանների խախտումները վարկառուի կողմից, վարկի կամ

փոխառության պայմանների այնպիսի վերանայում, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի ակտիվ շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, ինչպիսիք են Բանկի վարկառուների վճարունակության վատթարացումը, կամ վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Նախևառաջ Բանկը գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն առանձին-առանձին այն վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի են, և առանձին-առանձին կամ խմբային այն վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի չեն: Եթե Բանկը որոշում է, որ արժեզրկման անկողմնակալ վկայություն առկա չէ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի համար՝ լինի այն զգալի, թե՛ ոչ, ապա այն այդ վարկը ներառում է վարկային ռիսկի համանման բնութագիր ունեցող վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և կատարում է խմբային գնահատում՝ արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնց գծով առանձին իրականացվել է արժեզրկման ուսումնասիրություն և որոնց գծով ճանաչվել են կամ շարունակվում են ճանաչվել արժեզրկման կորուստներ, ներառված չեն արժեզրկման ընդհանուր գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող առկա տեղեկատվության հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկման կորստի գումարը գնահատելու համար պահանջվող տեղեկատվությունը կարող է սահմանափակ լինել կամ այլևս ամբողջությամբ չհամապատասխանել ներկա հանգամանքներին: Սա կարող է լինել այն դեպքում, երբ վարկառուն ֆինանսական դժվարություններ ունի և Բանկի տրամադրության տակ կան քիչ տվյալներ համանման վարկառուների մասին: Այս դեպքերում արժեզրկումից կորստի գումարը Բանկը գնահատում է ելնելով իր փորձից ու դատողություններից:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումը հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Բանկը վարկի մնացորդը (և արժեզրկման գծով ձևավորված ցանկացած պահուստները) դուրս է գրում, երբ ղեկավարությունը որոշում է, որ վարկն ենթակա չէ հավաքագրման, և ձեռնարկվել են վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

### **Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ**

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ակտիվներում ընդգրկված չգնանշվող բաժնային գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ այն հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Եթե առկա է այդ ներդրումների գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարն իրենից ներկայացնում է ներդրման հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվների ներկա շուկայական հատույցադրույքով գեղջված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունը:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և ենթակա չեն հակադարձման:

### **Վաճառքի համար մատչելի ակտիվներ**

Վաճառքի համար մատչելի ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթ կամ վնաս՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակային վնասը, որը համապարփակ ֆինանսական արդյունքից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ առանց մայր գումարի մարումների ու մաշվածության, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակային արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթում կատարած ներդրման իրական արժեքի էական կամ երկարաժամկետ նվազումը դրա սկզբնական արժեքից հանդիսանում է արժեզրկման անկողմնակալ վկայություն:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն կապել շահույթում կամ վնասում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուհանդերձ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

### **Ոչ ֆինանսական ակտիվներ**

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից (հանած վաճառքի ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գեղջվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը գեղջման այն դրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինի:

### **Պահուստներ**

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

### **Վարկավորման պարտավորվածություններ**

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը հանձն է առնում վարկավորման պարտավորվածություններ, որոնք ներառում են չօգտագործված վարկային պարտավորվածությունները, ակրեդիտիվները և երաշխիքները ու տրամադրում է վարկային ապահովագրության այլ տեսակներ:

Ֆինանսական երաշխիքներն իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Բանկին կատարել որոշակի վճարումներ, որոնք կփոխհատուցեն երաշխիքի սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրել, եթե առանձին պարտատերն ի վիճակի չլինի կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորության սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ ի սկզբանե ճանաչված գումարը՝ հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխիքի գծով կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխիքների գծով կորուստների պահուստը և վարկավորման այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունները և վարկավորման այլ պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

### **Բաժնետիրական կապիտալ**

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերին ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների:

### **Շահաբաժիններ**

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

## Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում շահույթի կամ վնասի կազմում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկի գծով ծախսը տարվա հարկվող շահույթի գծով վճարվելիք հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների ու հարկային նպատակներով օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների վրա: Ժամանակավոր տարբերություններ չեն սահմանվում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման համար, որը չի ազդում հաշվապահական հաշվառման կամ հարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկի գումարը հիմնված է ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի իրացման կամ մարման ակնկալվող մեթոդի վրա՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

## Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը կամ կիրառելի լողացող դրույքը:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով հաշվեգրված գեղչերը և հավելավճարները ճանաչվում են տոկոսային եկամտում:

Կոմիսիոն և այլ վճարները, այլ եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Շահաբաժինների տեսքով եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ շահաբաժնի հայտարարման օրը:

## Սեզմենտային հաշվետվություններ

Գործառնական սեզմենտը Բանկի բաղադրիչն է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից այն կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Բանկի այլ բաղադրիչների հետ գործառնություններից հասույթները և ծախսերը): Գործառնական սեզմենտների գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են Բանկի գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեզմենտին

միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով: Գործառնական սեգմենտի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն:

### **Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ**

2009թ. հունվարի 1-ից Բանկն ընդունեց ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» վերանայված ստանդարտը (որը գործում է 2009թ. հունվարի 1-ից կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Արդյունքում, «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը» փոխարինվեց «Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությամբ», որը ներառում է նաև ոչ սեփականատերերի հետ կապված սեփական կապիտալում տեղի ունեցած փոփոխությունները, այդ թվում՝ վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատումը: «Հաշվապահական հաշվեկշիռը» վերանվանվեց «Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության», իսկ «Դրամական միջոցների մասին հաշվետվությունը»՝ «Հաշվետվության դրամական միջոցների հոսքերի մասին»: Վերանայված ՀՀՄՍ 1-ի համաձայն ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներկայացվում է, երբ կազմակերպությունը վերահաշվարկում է համեմատական տեղեկատվությունը վերադասակարգումների, հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների կամ սխալների ճշգրտման պատճառով:

2009թ. հունվարի 1-ից Բանկն ընդունեց ՖՀՄՍ 8 «Գործառնական սեգմենտներ» ստանդարտը (որը գործում է 2009թ. հունվարի 1-ից կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Վերանայված ստանդարտը ներկայացնում է ղեկավարության մոտեցումը սեգմենտային հաշվետվություններին և պահանջում է բացահայտել սեգմենտային տեղեկատվությունը՝ հիմք ընդունելով Բանկի գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից կանոնավոր կերպով վերանայվող ներքին հաշվետվությունները՝ յուրաքանչյուր սեգմենտի գործունեության արդյունքները գնահատելու և դրան միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:

Բազմաթիվ «ՖՀՄՍ-ների բարեփոխումներ» կիրառվել են առանձին ստանդարտների հիմունքով:

### **Դեռևս չընդունված նոր ստանդարտներ և մեկնաբանություններ**

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Բանկի գործունեության վրա: Բանկը մտադիր է ընդունել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ: Բանկը դեռևս չի վերլուծել այս նոր ստանդարտների և փոփոխությունների հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Վերանայված ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտումներ» (2009թ.) ստանդարտը (որը գործում է 2011թ. հունվարի 1-ից կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար) ներկայացնում է կապակցված կողմերի հետ գործարքների և դրանց մնացորդների բացահայտման հիմնական պահանջների հետ կապված բացառություն, ներառյալ պարտավորվածությունները՝ կառավարության հետ առնչություն ունեցող կազմակերպությունների համար: Ի լրումն, ստանդարտը վերանայվել է ներկայացման որոշ պահանջներ հեշտացնելու նպատակով, որոնք նախկինում պարտադիր չէին հանդիսանում: Վերանայված ստանդարտը պետք է կիրառվի հետադարձ հիմունքով:

- ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտը կգործի 2013թ. հունվարի 1-ից կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը կիրառարակվի մի քանի փուլերով, և ենթադրվում է, որ կփոխարինի ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում» ստանդարտը ծրագրի ավարտից հետո՝ մինչև 2010թ. վերջը: ՖՀՄՍ 9-ի հրապարակման առաջին փուլը, որը վերաբերում է ֆինանսական ակտիվների ճանաչմանը և չափմանը, ավարտվեց 2009թ. նոյեմբերին: Բանկն ընդունում է, որ նոր ստանդարտը նախատեսում է բազմաթիվ փոփոխություններ ֆինանսական գործիքների հաշվառման համար և հավանական է, որ էական ազդեցություն կունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա: Այս փոփոխությունների ազդեցությունը կվերլուծվի ստանդարտի հաջորդ փուլերի հրապարակմանը զուգընթաց:

Բազմաթիվ «ՖՀՄՍ-ների բարեփոխումները», որոնք հանգեցնում են ներկայացման, ճանաչման կամ չափման հաշվառման փոփոխությունների, ուժի մեջ կմտնեն 2010թ. հունվարի 1-ից ոչ շուտ:

#### 4 Չուտ տոկոսային եկամուտ

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
<b>Տոկոսային եկամուտ</b>		
Հաճախորդներին տրված վարկերից	9,339,019	7,781,805
Վաճառքի համար մատչելի ակտիվներից	606,748	832,853
Բանկերում տեղաբաշխված միջոցներից	128,645	372,055
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	58,904	78,056
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից	21,663	95,630
	<b>10,154,979</b>	<b>9,160,399</b>
<b>Տոկոսային ծախս</b>		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներից և ավանդներից	1,833,633	1,176,696
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներից	431,837	99,162
Բանկերի ավանդներից և մնացորդներից	184,381	247,796
Այլ փոխառություններից	86,795	-
	<b>2,536,646</b>	<b>1,523,654</b>

#### 5 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
Դրամական փոխանցումներ	694,855	731,296
Վարկավորման գործարքներ	579,234	564,272
Վարկային քարտեր	402,847	401,658
Հաշիվների սպասարկում	231,548	215,984
Ակրեդիտիվներ և երաշխիքներ	146,652	177,707
Ավտոմատ գանձման մեքենաների ծառայություններ	42,925	73,409
Այլ	20,185	27,476
	<b>2,118,246</b>	<b>2,191,802</b>

## 6 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
Քարտերով իրականացվող գործառնությունների գծով վճարներ	193,760	187,541
Այլ	112,960	95,994
	<b>306,720</b>	<b>283,535</b>

## 7 Չուտ շահույթ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
Չուտ շահույթ արտարժույթային պայմանագրերից	111,398	60,609
Չուտ շահույթ (վնաս) պարտքային արժեթղթերի առք ու վաճառքից	(4,847)	2,675
	<b>106,551</b>	<b>63,284</b>

## 8 Չուտ շահույթ (վնաս) փոխարժեքային տարբերություններից

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
Շահույթ սփոթ գործարքներից	1,786,757	1,348,702
Չուտ շահույթ (վնաս) ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	(1,957,090)	221,242
	<b>(170,333)</b>	<b>1,569,944</b>

2009թ-ին դրամն արժեզրկվեց 23.2%-ով ի համեմատություն ԱՄՆ դոլարի, ինչը հանգեցրեց արտարժույթի վերագնահատումից էական վնասի:

## 9 Չուտ շահույթ վաճառքի համար մատչելի ակտիվներից

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
Բաժնային գործիքներ	81,076	86,275
Պարտքային գործիքներ	769	30,412
	<b>81,845</b>	<b>116,687</b>

## 10 Ընդհանուր վարչական ծախսեր

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
Աշխատակիցների հատուցումներ	2,811,615	2,915,581
ԷՅԷ-Էս-Բի-Սի Խմբի ՏՏ աջակցման ծախսեր և այլ վճարներ	1,297,263	618,191
Մաշվածություն և ամորտիզացիա	784,861	602,355
Հիմնական միջոցների վարձակալություն	448,478	431,918
Կապի և հաղորդակցության ծառայություններ	219,421	244,151
Մասնագիտական ծառայություններ	163,036	230,697
Ապահովագրություն	159,891	193,482
Գովազդ և շուկայավարում	99,634	198,405
Անվտանգություն	78,946	91,696
Արտարժույթի տեղափոխման ծախսեր	74,186	88,009
Կոմունալ ծառայություններ	66,792	59,539
ՏՏ-ին վերաբերող ծախսեր	60,753	55,700
Գրասենյակային ծախսեր	50,102	105,165
Վերանորոգման և պահպանման ծախսեր	45,476	44,493
Գործուղման և հանգստի կազմակերպման ծախս	38,877	56,242
Բարեգործություն և հովանավորություն	7,222	10,448
Այլ	121,721	206,313
	<b>6,528,274</b>	<b>6,152,385</b>

## 11 Շահութահարկի գծով ծախս

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
<b>Ընթացիկ հարկի գծով ծախս</b>		
Ընթացիկ տարի	599,755	972,679
Նախորդ տարիներում շահութահարկի պակաս (ավել) ներկայացված գումար	(19,843)	32,742
	<b>579,912</b>	<b>1,005,421</b>
<b>Հետաձգված հարկի գծով ծախս</b>		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	354,093	49,992
<b>Ընդամենը ծախս շահութահարկի գծով</b>	<b>934,005</b>	<b>1,055,413</b>

Ընթացիկ հարկի համար Բանկի նկատմամբ կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2008թ-ին՝ 20%): Հետաձգված հարկի գծով Բանկը կիրառել է 20% հարկային դրույք (2008թ-ին՝ 20%):

### Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>%</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>	<b>%</b>
Շահույթ մինչև հարկումը	<u>2,550,787</u>		<u>4,969,269</u>	
Շահութահարկի հաշվարկ կիրառելի հարկային դրույքով	510,157	20.0	993,854	20.0
Չուտ չնվազեցվող ծախսեր	443,691	17.4	28,817	0.6
Նախորդ տարիներում շահութահարկի պակաս (ավել) ներկայացված գումար	(19,843)	(0.8)	32,742	0.6
	<u><b>934,005</b></u>	<u><b>36.6</b></u>	<u><b>1,055,413</b></u>	<u><b>21.2</b></u>

### Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող արժեքների ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2009թ. և 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը 2009թ. և 2008թ. ընթացքում:

<b>հազ. դրամ</b>	<b>Մնացորդը առ 1 հունվարի 2009թ.</b>	<b>Շահույթում կամ վնասում ճանաչված</b>	<b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված</b>	<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2009թ.</b>
Դրամական միջոցներ	107	(87)	-	20
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	38,079	33,522	-	71,601
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	16,320	(5,461)	-	10,859
Հաճախորդներին տրված վարկեր	200,516	409,468	-	609,984
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	(865)	335	(6,648)	(7,178)
Հիմնական միջոցներ	(24,385)	(9,632)	-	(34,017)
Այլ ակտիվներ	7,389	(882)	-	6,507
Այլ պարտավորություններ	(76,191)	(73,170)	-	(149,361)
	<u><b>160,970</b></u>	<u><b>354,093</b></u>	<u><b>(6,648)</b></u>	<u><b>508,415</b></u>

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2008թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2008թ.
Դրամական միջոցներ	85	22	-	107
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	21,053	17,026	-	38,079
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	14,696	1,624	-	16,320
Հաճախորդներին տրված վարկեր	139,791	60,725	-	200,516
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	(1,307)	(238)	680	(865)
Հիմնական միջոցներ	(23,420)	(965)	-	(24,385)
Այլ ակտիվներ	14,297	(6,908)	-	7,389
Այլ պարտավորություններ	(54,897)	(21,294)	-	(76,191)
	<b>110,298</b>	<b>49,992</b>	<b>680</b>	<b>160,970</b>

### Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված շահութահարկ

Ստորև ներկայացված են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի տարրերին վերաբերող հարկային հետևանքները:

հազ. դրամ	2009թ.			2008թ.		
	Գումարը մինչև հարկումը	Հարկի գծով (ծախս)/ եկամուտ	Գումարը հարկումից հետո	Գումարը մինչև հարկումը	Հարկի գծով (ծախս)/ եկամուտ	Գումարը հարկումից հետո
Վաճառքի համար մատչելի ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն	51,280	(10,256)	41,024	47,683	(9,537)	38,146
Շահույթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն	(84,520)	16,904	(67,616)	(44,284)	8,857	(35,427)
<b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</b>	<b>(33,240)</b>	<b>6,648</b>	<b>(26,592)</b>	<b>3,399</b>	<b>(680)</b>	<b>2,719</b>

## 12 ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ

	2009թ. հազ. դրամ	2008թ. հազ. դրամ
Նոստրո հաշիվներ	13,782,768	12,205,318

Նոստրո հաշիվները ներառում են նվազագույն պարտադիր պահուստը, որը հաշվարկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կանոնակարգերի համաձայն՝ ներգրավված միջոցների 8%-ից 12%-ի չափով: Այս ավանդների ելքագրումը սահմանափակված չէ, սակայն նվազագույն մնացորդը չպահպանելու դեպքում Բանկի նկատմամբ կարող են կիրառվել տուգանքներ:

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում պահվող նոստրո հաշվի մնացորդը կազմում էր 522,168 հազար դրամ (2008թ-ին՝ 466,814 հազար դրամը), որը սառեցվել էր ԱրՔա վճարային համակարգի միջոցով գործառնությունների իրականացման համար:

## 13 Բանկերում տեղաբաշխված միջոցներ

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
<b>Նոստրո հաշիվներ</b>		
ԱԱԱ վարկանիշով	8,107,769	8,140,855
ԱԱ- -ից ԱԱ+ վարկանիշով	12,616,112	8,152,227
Ա- -ից Ա+ վարկանիշով	25,218	-
Վարկանիշ չունեցող	491,150	228,589
<b>Ընդամենը նոստրո հաշիվներ</b>	<b>21,240,249</b>	<b>16,521,671</b>
<b>Վարկեր և ավանդներ</b>		
ԱԱ- -ից ԱԱ+ վարկանիշով	10,635,170	-
Ա- -ից Ա+ վարկանիշով	3,778,950	15,638
10 խոշորագույն հայկական բանկեր	93,789	770,979
Վարկանիշ չունեցող	63,987	-
<b>Ընդամենը վարկեր և ավանդներ</b>	<b>14,571,896</b>	<b>786,617</b>
<b>Ընդամենը բանկերում տեղաբաշխված միջոցներ</b>	<b>35,812,145</b>	<b>17,308,288</b>

### Բանկերում տեղաբաշխված միջոցների կենտրոնացում

2009թ. և 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը միջոցներ ուներ տեղաբաշխված համապատասխանաբար չորս և երկու բանկում, որոնց մնացորդները գերազանցում էին բանկերում տեղաբաշխված ընդհանուր միջոցների 10%-ը: 2009թ. և 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր արժեքը կազմում էր համապատասխանաբար 33,332,800 հազար դրամ և 15,581,304 հազար դրամ:

## 14 Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

	2009թ. հազ. դրամ	2008թ. հազ. դրամ
<b>Բանկի կողմից պահվող ԱԿՏԻՎՆԵՐ</b>		
<b>Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ</b>		
ՀՀ պետական գանձապետական պարտատոմսեր	728,527	176,387
<b>Ածանցյալ ֆինանսական գործիքներ</b>		
Արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրեր	40,859	79,016
	<b>769,386</b>	<b>255,403</b>
<b>Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված</b>		
ՀՀ պետական գանձապետական պարտատոմսեր	67,409	562,874
	<b>67,409</b>	<b>562,874</b>

2009թ. և 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը գրավադրել էր որոշ արժեթղթեր որպես ապահովվածություն հետգնման պայմանագրերի դիմաց, որոնք ներառված էին «Բանկերի ավանդներ և մնացորդներ» հոդվածում (տես՝ ծանոթագրություն 20):

Բոլոր շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներն իրենցից ներկայացնում են որպես առևտրային նպատակներով պահվող գործիքներ դասակարգված ֆինանսական ակտիվներ:

### Արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրեր

Ստորև բերվող աղյուսակում, հիմնական արտարժույթների կտրվածքով, ներկայացված են արտարժույթի փոխանակման ֆորվարդային պայմանագրերի գումարները 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ներառյալ պայմանագրային փոխարժեքը և մինչև մարումը մնացած ժամկետը: Ստորև ներկայացված արտարժույթով արտահայտված գումարները փոխարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքներով: Այս դեռևս չկատարված պայմանագրերի գծով չիրացված շահույթը և վնասը, կատարման ենթակա սակայն դեռևս չկատարված պայմանագրերի գծով ստացվելիք և վճարվելիք գումարների հետ մեկտեղ, ճանաչվել են շահույթում կամ վնասում և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կազմում՝ ըստ կիրառելիության:

	Անվանական գումար		Միջին կշռված պայմանագրային փոխարժեքները	
	2009թ. հազ. դրամ	2008թ. հազ. դրամ	2009թ.	2008թ. հազ. դրամ
<b>ԱՄՆ դոլարի առք ՀՀ դրամի վաճառք</b>				
Մինչև 3 ամիս	1,222,516	766,481	382.5	302.8
3-ից 12 ամիս	1,683,017	1,899,657	379.8	299.5
<b>ՀՀ դրամի առք եվրոյի վաճառք</b>				
Մինչև 3 ամիս	-	65,700	-	438.0
<b>Եվրոյի առք ԱՄՆ դոլարի վաճառք</b>				
Մինչև 3 ամիս	-	39,150	-	1.4

	Անվանական գումար		Միջին կշռված պայմանագրային փոխարժեքները	
	2009թ. հազ. դրամ	2008թ. հազ. դրամ	2009թ.	2008թ. հազ. դրամ
<b>ՀՀ դրամի առք ՄԱԷ դիրհամի վաճառք</b>				
Մինչև 3 ամիս	-	12,417	-	83.5
<b>ՀՀ դրամի առք ԱՄՆ դոլարի վաճառք</b>				
Մինչև 3 ամիս	-	76,056	-	316.9
3-ից 12 ամիս	-	416,970	-	318.8
<b>ԱՄՆ դոլարի առք ՄԲ ֆունտ ստերլինգի վաճառք</b>				
Մինչև 3 ամիս	-	35,448	-	1.4
<b>ԱՄՆ դոլարի առք կանադական դոլարի վաճառք</b>				
Մինչև 3 ամիս	-	17,869	-	1.0
3-ից 12 ամիս	-	11,896	-	1.0
<b>Կանադական դոլարի առք ՀՀ դրամի վաճառք</b>				
Մինչև 3 ամիս	-	14,468	-	310.6
3-ից 12 ամիս	-	9,637	-	310.9
<b>ՀՀ դրամի առք կանադական դոլարի վաճառք</b>				
Մինչև 3 ամիս	-	5,654	-	249.7
<b>ՄԱԷ դիրհամի առք ՀՀ դրամի վաճառք</b>				
Մինչև 3 ամիս	-	12,268	-	83.9
<b>ՀՀ դրամի առք ռուբլու վաճառք</b>				
Մինչև 3 ամիս	-	6,463	-	10.5

## 15 Հաճախորդներին տրված վարկեր

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
<b>Իրավաբանական անձանց տրված վարկեր</b>		
Վարկեր խոշոր ընկերություններին	27,775,192	27,294,243
Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին	11,101,346	11,323,987
<b>Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր</b>	<b>38,876,538</b>	<b>38,618,230</b>
<b>Անհատներին տրված վարկեր</b>		
Հիփոթեքային վարկեր	18,555,392	22,505,861
Ավտոմեքենայի վարկեր	3,578,738	5,617,819
Կառուցման վարկեր	2,365,647	2,642,717
Վարկային քարտեր	1,745,506	1,798,563
Սպառողական վարկեր	330,599	1,591,076
Անհատներին տրված այլ վարկեր	281,384	341,045
<b>Ընդամենը անհատներին տրված վարկեր</b>	<b>26,857,266</b>	<b>34,497,081</b>
<b>Հաճախորդներին տրված համախառն վարկեր</b>	<b>65,733,804</b>	<b>73,115,311</b>
Արժեզրկման գծով պահուստ	(463,292)	(169,677)
<b>Հաճախորդներին տրված զուտ վարկեր</b>	<b>65,270,512</b>	<b>72,945,634</b>

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկված վարկերի գծով հաշվեգրված տոկոսները կազմել են 157,940 հազար դրամ (31 դեկտեմբերի 2008թ.՝ զրո):

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում:

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
Մնացորդը տարեսկզբին	169,677	33,834
Արժեզրկումից կորուստներ	403,754	157,827
Դուրս գրումներ	(110,139)	(21,984)
<b>Մնացորդը տարեվերջին</b>	<b>463,292</b>	<b>169,677</b>

### Իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2009թ. հազ. դրամ	Արժեզրկման գծով պահուստ հազ. դրամ	Չուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկում %
<b>Վարկեր խոշոր ընկերություններին</b>				
Վարկեր, որոնց գծով արժեզրկման առանձին հայտանիշ չի հայտնաբերվել				
- ոչ ժամկետանց	25,652,155	-	25,652,155	-
Ժամկետանց, սակայն ոչ արժեզրկված վարկեր				
- 30-89 օր ժամկետանց	864,116	-	864,116	-
- 90-179 օր ժամկետանց	1,258,921	-	1,258,921	-
<b>Ընդամենը վարկեր խոշոր ընկերություններին</b>	<b>27,775,192</b>	<b>-</b>	<b>27,775,192</b>	<b>-</b>
<b>Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին</b>				
Վարկեր, որոնց գծով արժեզրկման առանձին հայտանիշ չի հայտնաբերվել				
- ոչ ժամկետանց	9,413,610	-	9,413,610	-
Ժամկետանց, սակայն ոչ արժեզրկված վարկեր				
- մինչև 30 օր ժամկետանց	71,531	-	71,531	-
- 30-89 օր ժամկետանց	38,439	-	38,439	-
- 90-179 օր ժամկետանց	489,130	-	489,130	-
- 180-270 օր ժամկետանց	250,164	-	250,164	-
Արժեզրկված վարկեր				
- 180-270 օր ժամկետանց	838,472	(54,853)	783,619	6.5%
<b>Ընդամենը վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին</b>	<b>11,101,346</b>	<b>(54,853)</b>	<b>11,046,493</b>	<b>0.5%</b>
<b>Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր</b>	<b>38,876,538</b>	<b>(54,853)</b>	<b>38,821,685</b>	<b>0.1%</b>

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2008թ. հազ. դրամ	Արժեզրկման գծով պահուստ հազ. դրամ	Զուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկում %
<b>Վարկեր խոշոր ընկերություններին</b>				
Վարկեր, որոնց գծով արժեզրկման առանձին հայտանիշ չի հայտնաբերվել				
- ոչ ժամկետանց	27,294,243	-	27,294,243	-
<b>Ընդամենը վարկեր խոշոր ընկերություններին</b>	<b>27,294,243</b>	<b>-</b>	<b>27,294,243</b>	<b>-</b>
<b>Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին</b>				
Վարկեր, որոնց գծով արժեզրկման առանձին հայտանիշ չի հայտնաբերվել				
- ոչ ժամկետանց	10,526,943	-	10,526,943	-
Ժամկետանց, սակայն ոչ արժեզրկված վարկեր				
- մինչև 30 օր ժամկետանց	160,012	-	160,012	-
- 30-89 օր ժամկետանց	630,228	-	630,228	-
- 90-179 օր ժամկետանց	6,804	-	6,804	-
<b>Ընդամենը վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին</b>	<b>11,323,987</b>	<b>-</b>	<b>11,323,987</b>	<b>-</b>
<b>Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր</b>	<b>38,618,230</b>	<b>-</b>	<b>38,618,230</b>	<b>-</b>

Վարկերի արժեզրկումը տեղի է ունենում վարկի սկզբնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի դեպքերի արդյունքում, որոնք ազդեցություն են ունենում վարկի հետ կապված դրամական միջոցների ապագա գնահատված հոսքերի վրա և որը կարելի է աժանահավատորեն գնահատել: Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի համար բացակայում է դրանց ուղղակիորեն վերազրելի արժեզրկման վկայություն:

Արժեզրկման անկողմնակալ հայտանիշներ են հանդիսանում՝

- ժամկետանց վճարները ըստ վարկային պայմանագրի,
- վարկառուի ֆինանսական վիճակի էական վատթարացումը,
- տնտեսական միջավայրի վատթարացումը, բացասական փոփոխությունները վարկառուի շուկաներում:

Իրավաբանական անձանց տրված վարկերի արժեզրկման գծով պահուստը գնահատելիս Բանկը հիմնվել է արժեզրկված կամ ժամկետանց վարկերի գծով դրամական միջոցների ապագա հոսքերի վերլուծության վրա (ներառյալ գրավի գնահատված իրացման արժեքից, եթե Բանկը որոշի, որ վարկառուի գործարար գործունեությունից ստացվող դրամական միջոցների հոսքերը բավարար չեն վարկը մարելու համար), ինչպես նաև արժեզրկման հայտանիշ չունեցող վարկերի պորտֆելների գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա:

Իրավաբանական անձանց տրված վարկերի գծով արժեզրկման պահուստը որոշելիս՝ ղեկավարությունն առաջնորդվել է հետևյալ հիմնական ենթադրություններով.

- նախորդ տարիների տարեկան վնասի դրույքը կազմում է 0%:
- արժեզրկման առանձին հայտանիշ ունեցող վարկերի համար գրավադրված գույքի վաճառքի դեպքում կիրառվում է 15% և 45% զեղչ տարեվերջին մոտ գրավի գնահատված արժեքի գծով, և գրավի իրացումից մուտքերի ստացումը հետաձգվում է 6-ից 12 ամսով:

Այս գնահատումների փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկերի արժեզրկման գծով պահուստի վրա: Եթե դրամական միջոցների գնահատված հոսքերի գուտներ կա արժեքը նվազեր մեկ տոկոսով, ապա իրավաբանական անձանց տրված վարկերի արժեզրկման գծով ընդհանուր պահուստի գումարը 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կավելանար 388,217 հազար դրամով (31 դեկտեմբերի 2008թ.՝ 386,182 հազար դրամով): Եթե արժեզրկման առանձին հայտանիշ ունեցող վարկերի դիմաց գրավադրված գույքի ակնկալվող վաճառքը հետաձգվեր 3 ամսով և գնահատված արժեքը նվազեր 10%-ից 20%-ով, ապա իրավաբանական անձանց տրված վարկերի արժեզրկման գծով ընդհանուր պահուստի գումարը 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կավելանար 245,491 հազար դրամով (31 դեկտեմբերի 2008թ.՝ զրո):

2009թ. ընթացքում Բանկը վերանայել է 2,178,269 հազար դրամ գումարի չափով (31 դեկտեմբերի 2008թ.՝ զրո) իրավաբանական անձանց տրված վարկերի պայմանագրերի պայմանները, որոնք այլապես կարող էին դառնալ ժամկետանց կամ արժեզրկված: Նման փոփոխությունների նպատակն է կառավարել հաճախորդների հետ հարաբերությունները և առավելագույնի հասցնել վարկի հավաքագրման հնարավորությունները: Փոփոխված պայմաններով վարկերը ներառված են արժեզրկման առանձին հայտանիշ ունեցող վարկերում, բացառությամբ այն դեպքերի, երբ վարկառուն անկարող է համախառնասխանել փոփոխված պայմաններին:

**Գրավի վերլուծություն**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է իրավաբանական անձանց տրված վարկերի վերլուծությունն ըստ գրավի տեսակների 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>Վարկային պորտֆելի %</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>	<b>Վարկային պորտֆելի %</b>
Անշարժ գույք	35,219,372	91%	32,319,876	84%
Դրամական միջոցներ	1,472,392	4%	1,918,998	5%
Արժեթղթեր	714,605	2%	-	0%
Փոխադրամիջոցներ և սարքավորումներ	113,521	0%	1,379,345	3%
Այլ գրավ	252,763	1%	2,375,680	6%
Գրավով չապահովված վարկեր	1,049,032	2%	624,331	2%
	<b>38,821,685</b>	<b>100%</b>	<b>38,618,230</b>	<b>100%</b>

Վերը բերված աղյուսակում արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են վարկերի հաշվեկշռային արժեքները և պարտադիր չէ, որ արտացոլեն գրավի իրական արժեքը:

Իրավաբանական անձանց տրված արժեզրկված և ժամկետանց վարկերի գրավների իրական արժեքն առնվազն հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին 2009թ. և 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2009թ. ընթացքում Բանկը ձեռք չի բերել ակտիվներ՝ իրավաբանական անձանց տրված վարկերի դիմաց ընդունված գրավի նկատմամբ վերահսկողության իրավունք ստանալու արդյունքում (31 դեկտեմբերի 2008թ.՝ զրո):

***Արժեզրկման գծով պահուստի շարժի վերլուծություն***

Ստորև ներկայացված է իրավաբանական անձանց տրված վարկերի արժեզրկման գծով պահուստի շարժը 2009թ. ընթացքում՝ ըստ վարկերի տեսակների:

	<b>Վարկեր խոշոր ընկերություններին հազ. դրամ</b>	<b>Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին հազ. դրամ</b>	<b>Ընդամենը հազ. դրամ</b>
Վարկի արժեզրկման գծով պահուստը առ 1 հունվարի	-	-	-
Դուրս գրումներ	-	-	-
Արժեզրկումից կորուստներ	-	54,853	54,853
<b>Վարկի արժեզրկման գծով պահուստը առ 31 դեկտեմբերի</b>	<b>-</b>	<b>54,853</b>	<b>54,853</b>

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկված վարկերի գծով հաշվեգրված տոկոսները կազմել են 71,126 հազար դրամ (31 դեկտեմբերի 2008թ.՝ զրո):

### Անհատներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է անհատներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Զուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկում %
<b>Հիփոթեքային վարկեր</b>				
- Ոչ ժամկետանց	17,787,134	(8,757)	17,778,377	0.1
- Մինչև 30 օր ժամկետանց	186,327	(140)	186,187	0.1
- 30-89 օր ժամկետանց	131,796	(78)	131,718	0.1
- 90-179 օր ժամկետանց	95,506	(5,386)	90,120	5.6
- Ավելի քան 180 օր ժամկետանց	354,629	(95,728)	258,901	27.0
<b>Ընդամենը հիփոթեքային վարկեր</b>	<b>18,555,392</b>	<b>(110,089)</b>	<b>18,445,303</b>	<b>0.6</b>
<b>Ավտոմեքենայի վարկեր</b>				
- Ոչ ժամկետանց	3,295,501	(6,403)	3,289,098	0.2
- Մինչև 30 օր ժամկետանց	46,956	(4,936)	42,020	10.5
- 30-89 օր ժամկետանց	35,522	(7,185)	28,337	20.2
- 90-179 օր ժամկետանց	35,036	(17,103)	17,933	48.8
- Ավելի քան 180 օր ժամկետանց	165,723	(164,552)	1,171	99.3
<b>Ընդամենը ավտոմեքենայի վարկեր</b>	<b>3,578,738</b>	<b>(200,179)</b>	<b>3,378,559</b>	<b>5.6</b>
<b>Կառուցման վարկեր</b>				
- Ոչ ժամկետանց	2,207,060	(1,094)	2,205,966	0.1
- Մինչև 30 օր ժամկետանց	22,254	(11)	22,243	0.1
- 30-89 օր ժամկետանց	29,000	(15)	28,985	0.1
- 90-179 օր ժամկետանց	-	-	-	-
- Ավելի քան 180 օր ժամկետանց	107,333	(63,516)	43,817	59.2
<b>Ընդամենը կառուցման վարկեր</b>	<b>2,365,647</b>	<b>(64,636)</b>	<b>2,301,011</b>	<b>2.7</b>
<b>Վարկային քարտեր</b>				
- Ոչ ժամկետանց	1,700,720	(1,559)	1,699,161	0.1
- Մինչև 30 օր ժամկետանց	7,741	(554)	7,187	7.2
- 30-89 օր ժամկետանց	9,843	(3,484)	6,359	35.4
- 90-179 օր ժամկետանց	9,871	(6,680)	3,191	67.7
- Ավելի քան 180 օր ժամկետանց	17,331	(17,246)	85	99.5
<b>Ընդամենը վարկային քարտեր</b>	<b>1,745,506</b>	<b>(29,523)</b>	<b>1,715,983</b>	<b>1.7</b>
<b>Սպառողական վարկեր</b>				
- Ոչ ժամկետանց	321,770	(384)	321,386	0.1
- Մինչև 30 օր ժամկետանց	3,203	(320)	2,883	10.0
- 30-89 օր ժամկետանց	2,197	(595)	1,602	27.1
- 90-179 օր ժամկետանց	3,429	(2,589)	840	75.5
<b>Ընդամենը սպառողական վարկեր</b>	<b>330,599</b>	<b>(3,888)</b>	<b>326,711</b>	<b>1.2</b>
<b>Անհատներին տրված այլ վարկեր</b>				
- Ոչ ժամկետանց	234,600	(108)	234,492	0.1
- Մինչև 30 օր ժամկետանց	46,784	(16)	46,768	0.0
<b>Ընդամենը անհատներին տրված այլ վարկեր</b>	<b>281,384</b>	<b>(124)</b>	<b>281,260</b>	<b>0.0</b>
<b>Ընդամենը անհատներին տրված վարկեր</b>	<b>26,857,266</b>	<b>(408,439)</b>	<b>26,448,827</b>	<b>1.5</b>

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է անհատներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	<b>Համախառն վարկեր հազ. դրամ</b>	<b>Արժեզրկում հազ. դրամ</b>	<b>Զուտ վարկեր հազ. դրամ</b>	<b>Համախառն վարկերի արժեզրկում %</b>
<b>Հիփոթեքային վարկեր</b>				
- Ոչ ժամկետանց	22,147,612	-	22,147,612	-
- Մինչև 30 օր ժամկետանց	158,235	-	158,235	-
- 30-89 օր ժամկետանց	133,095	-	133,095	-
- 90-179 օր ժամկետանց	53,282	-	53,282	-
- Ավելի քան 180 օր ժամկետանց	13,637	-	13,637	-
<b>Ընդամենը հիփոթեքային վարկեր</b>	<b>22,505,861</b>	<b>-</b>	<b>22,505,861</b>	<b>-</b>
<b>Ավտոմեքենայի վարկեր</b>				
- Ոչ ժամկետանց	5,349,718	(26,762)	5,322,956	0.5
- Մինչև 30 օր ժամկետանց	105,592	(4,961)	100,631	4.7
- 30-89 օր ժամկետանց	73,489	(12,028)	61,461	16.4
- 90-179 օր ժամկետանց	43,459	(26,731)	16,728	61.5
- Ավելի քան 180 օր ժամկետանց	45,561	(45,561)	-	100.0
<b>Ընդամենը ավտոմեքենայի վարկեր</b>	<b>5,617,819</b>	<b>(116,043)</b>	<b>5,501,776</b>	<b>2.1</b>
<b>Կառուցման վարկեր</b>				
- Ոչ ժամկետանց	2,611,674	-	2,611,674	-
- Մինչև 30 օր ժամկետանց	31,043	-	31,043	-
<b>Ընդամենը կառուցման վարկեր</b>	<b>2,642,717</b>	<b>-</b>	<b>2,642,717</b>	<b>-</b>
<b>Վարկային քարտեր</b>				
- Ոչ ժամկետանց	1,712,188	(9,603)	1,702,585	0.6
- Մինչև 30 օր ժամկետանց	3,397	(221)	3,176	6.3
- 30-89 օր ժամկետանց	56,696	(10,079)	46,617	17.8
- 90-179 օր ժամկետանց	22,216	(12,593)	9,623	56.7
- Ավելի քան 180 օր ժամկետանց	4,066	(4,066)	-	100.0
<b>Ընդամենը վարկային քարտեր</b>	<b>1,798,563</b>	<b>(36,562)</b>	<b>1,762,001</b>	<b>2.0</b>
<b>Սպառողական վարկեր</b>				
- Ոչ ժամկետանց	1,561,445	(10,930)	1,550,515	0.7
- Մինչև 30 օր ժամկետանց	14,101	(895)	13,206	6.4
- 30-89 օր ժամկետանց	10,260	(1,768)	8,492	17.2
- 90-179 օր ժամկետանց	4,415	(2,624)	1,791	59.4
- Ավելի քան 180 օր ժամկետանց	855	(855)	-	100.0
<b>Ընդամենը սպառողական վարկեր</b>	<b>1,591,076</b>	<b>(17,072)</b>	<b>1,574,004</b>	<b>1.1</b>
<b>Անհատներին տրված այլ վարկեր</b>				
- Ոչ ժամկետանց	341,045	-	341,045	-
<b>Ընդամենը անհատներին տրված այլ վարկեր</b>	<b>341,045</b>	<b>-</b>	<b>341,045</b>	<b>-</b>
<b>Ընդամենը անհատներին տրված վարկեր</b>	<b>34,497,081</b>	<b>(169,677)</b>	<b>34,327,404</b>	<b>0.5</b>

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումից կորուստները որոշելիս Բանկն առաջնորդվել է հետևյալ հիմնական ենթադրություններով.

- վնասի տեղաշարժի դրույքները կայուն են և կարող են գնահատվել վերջին 12 ամիսների ընթացքում կրած պատմական կորուստների միգրացիայի մոդելի հիման վրա՝ ավտոմեքենայի վարկերի, վարկային քարտերի և անհատներին տրված այլ վարկերի համար:
- հիփոթեքային և կառուցման վարկերի համար, որոնք վարկառու անկարող է մարել, հաշվի է առնվում գրավի իրացումից մուտքերի ստացման 12 ամիս հետաձգման հնարավորությունը և կիրառվում է 20% գեղջ սկզբնապես գնահատված արժեքի գծով:

Այս գնահատումների փոփոխություններն կարող են ազդեցություն ունենալ վարկերի արժեզրկման գծով պահուստի վրա: Օրինակ, եթե դրամական միջոցների գնահատված հոսքերի զուտ ներկա արժեքը նվազեր երեք տոկոսով, ապա անհատներին տրված վարկերի արժեզրկման գծով ընդհանուր պահուստի գումարը 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կավելանար 793,464 հազար դրամով (31 դեկտեմբերի 2008թ.՝ 1,029,822 հազար դրամով):

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ անհատներին տրված վարկերի պորտֆելում ներառված էին 38,430 հազար դրամ գումարով վերանայված պայմաններով վարկեր (31 դեկտեմբերի 2008թ.՝ զրո):

***Գրավի վերլուծություն***

Հիփոթեքային և կառուցման վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը: Ավտոմեքենաների վարկերի դիմաց գրավադրվում են գնված ավտոմեքենաները: Վարկային քարտերը և սպառողական վարկերը գրավով չեն ապահովվում:

Բանկի գնահատմամբ անշարժ գույքի ապահովվածությամբ ժամկետանց կամ արժեզրկված վարկերի գրավի իրական արժեքն առնվազն հավասար է վարկի մնացորդի 90%-ին: Դեկավարությունը գտնում է, որ հնարավոր չէ գնահատել անհատներին տրված այլ վարկերի գրավների իրական արժեքը:

***Արժեզրկման գծով պահուստի շարժի վերլուծություն***

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժն ըստ անհատներին տրված վարկերի տեսակների 2009թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

<b>հազ. դրամ</b>	<b>Հիփոթեք. վարկեր</b>	<b>Ավտոմեքեն. վարկեր</b>	<b>Կառուցման վարկեր</b>	<b>Վարկ. քարտեր</b>	<b>Սպառողակ. վարկեր</b>	<b>Անհատն. տրված այլ վարկեր</b>	<b>Ընդամենը</b>
Վարկի արժեզրկման գծով պահուստը առ 1 հունվարի	-	116,043	-	36,562	17,072	-	169,677
Դուրսգրումներ	(2,630)	(24,370)	-	(61,363)	(21,776)	-	(110,139)
Արժեզրկումից կորուստներ	112,719	108,506	64,636	54,324	8,592	124	348,901
<b>Վարկի արժեզրկման գծով պահուստը առ 31 դեկտեմբերի</b>	<b>110,089</b>	<b>200,179</b>	<b>64,636</b>	<b>29,523</b>	<b>3,888</b>	<b>124</b>	<b>408,439</b>

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժն ըստ անհատներին տրված վարկերի տեսակների 2008թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

հազ. դրամ	Հիփոթեք. վարկեր	Ավտոմեքեն. վարկեր	Կառուցման վարկեր	Վարկ. քարտեր	Սպառողակ. վարկեր	Անհատն. տրված այլ վարկեր	Ընդամենը
Վարկի արժեզրկման գծով պահուստը առ 1 հունվարի	-	16,889	-	10,771	6,174	-	33,834
Դուրսգրումներ	-	5,336	-	(23,490)	(3,830)	-	(21,984)
Արժեզրկումից կորուստներ	-	93,818	-	49,281	14,728	-	157,827
<b>Վարկի արժեզրկման գծով պահուստը առ 31 դեկտեմբերի</b>	<b>-</b>	<b>116,043</b>	<b>-</b>	<b>36,562</b>	<b>17,072</b>	<b>-</b>	<b>169,677</b>

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկված վարկերի գծով հաշվեզրկված տոկոսները կազմել են 86,814 հազար դրամ գումարով տոկոսներ (31 դեկտեմբերի 2008թ.՝ զրո):

### Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունը ծավալել են տնտեսության հետևյալ ճյուղերում.

	2009թ. հազ. դրամ	2008թ. հազ. դրամ
Առևտուր	18,772,093	18,613,147
Սննդի արտադրություն	4,914,131	5,635,128
Արդյունաբերություն	3,385,503	2,291,924
Շինարարություն	2,588,493	2,029,533
Ֆինանսներ	2,225,388	1,753,696
Ծառայություններ	2,179,571	3,246,280
Էներգետիկա	1,839,047	1,546,858
Քիմիական արդյունաբերություն	519,743	611,009
Գյուղատնտեսություն	322,224	451,092
Այլ	2,130,345	2,439,563
Անհատներին տրված վարկեր	26,857,266	34,497,081
	<b>65,733,804</b>	<b>73,115,311</b>
Արժեզրկման գծով պահուստ	(463,292)	(169,677)
	<b>65,270,512</b>	<b>72,945,634</b>

### Վարկային ռիսկի կենտրոնացվածություն

2009թ. և 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի վարկառուներ կամ փոխկապակցված վարկառուների խմբեր, որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում էին հաճախորդներին տրված ընդհանուր վարկերի 10%-ը:

## Վարկերի ժամկետայնություն

Բանկի վարկային պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 35-ում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի պայմանագրով նախատեսված մարման ժամկետին մնացած ժամանակահատվածը:

## 16 Վաճառքի համար մատչելի ակտիվներ

	2009թ. հազ. դրամ	2008թ. հազ. դրամ
<b>Բանկի կողմից պահվող</b>		
<b>Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ</b>		
ՀՀ պետական գանձապետական պարտատոմսեր	4,959,380	470,179
	<b>4,959,380</b>	<b>470,179</b>
<b>Բաժնային գործիքներ – Չգնանշվող</b>		
ԱԲՌ-Ա վարկային բյուրո	19,140	19,140
Արմենիան Բարդ	12,143	12,143
SWIFT	793	636
	<b>32,076</b>	<b>31,919</b>
<b>Բաժնային գործիքներ – Գնանշվող</b>		
Visa INC	-	74,869
	-	<b>74,869</b>
	<b>4,991,456</b>	<b>576,967</b>
<b>Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված</b>		
<b>Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ</b>		
ՀՀ պետական գանձապետական պարտատոմսեր	3,350,259	7,536,745
	<b>3,350,259</b>	<b>7,536,745</b>

## Որոշելի իրական արժեք չունեցող ներդրումներ

Սկզբնական արժեքով ներկայացված վաճառքի համար մատչելի ներդրումները ներառում են չգնանշվող բաժնային արժեթղթերը տնտեսության ֆինանսական սեկտորում: Այս ներդրումների համար գործող շուկա գոյություն չունի, և վերջերս տեղի չեն ունեցել այնպիսի գործարքներ, որոնք կարող էին տրամադրել վկայություն դրանց ընթացիկ իրական արժեքի մասին: Ի լրումն, գեղջված դրամական միջոցների հոսքերի մեթոդի կիրառման արդյունքում ձևավորվում են մի շարք իրական արժեքներ, ինչը պայմանավորված է այս ոլորտում դրամական միջոցների ապագա հոսքերի առկայության հետ կապված անորոշությամբ:

## 17 Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

	2009թ. հազ. դրամ	2008թ. հազ. դրամ
<b>Բանկի կողմից պահվող</b>		
<b>Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ</b>		
ՀՀ պետական գանձապետական պարտատոմսեր	94,554	594,287
Հաշվեգրված տոկոսներ	2,434	13,081
	<b>96,988</b>	<b>607,368</b>

## 18 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Հոդ և շենքեր	Վարձակ. հիմն. միջոցն. գծով կապ. ներդրումն.	Փոխադրա- միջոցներ	Համակարգչ. սարքավոր.	Ոչ նյութակ. ակտիվն.	Այլ	Ընդամենը
<b>Սկզբնական արժեք/ Վերագնահատված արժեք</b>							
Առ 1 հունվարի 2009թ.	1,732,420	2,560,420	155,175	1,232,088	422,240	1,252,104	7,354,447
Ավելացումներ/ փոխանցումներ	26,315	18,296	-	87,043	782,467	(7,144)	906,977
Օտարումներ	(529)	(5,852)	(2,449)	(17,274)	(2,239)	(16,871)	(45,214)
<b>Առ 31 դեկտեմբերի 2009թ.</b>	<b>1,758,206</b>	<b>2,572,864</b>	<b>152,726</b>	<b>1,301,857</b>	<b>1,202,468</b>	<b>1,228,089</b>	<b>8,216,210</b>
<b>Մաշվածություն և արժեզրկումից կորուստներ</b>							
Առ 1 հունվարի 2009թ.	(316,633)	(1,087,300)	(92,058)	(539,218)	(117,029)	(458,555)	(2,610,793)
Մաշվածության ծախս	(67,482)	(194,683)	(22,360)	(201,994)	(120,383)	(177,959)	(784,861)
Օտարումներ	350	5,427	2,033	12,860	766	9,168	30,604
<b>Առ 31 դեկտեմբերի 2009թ.</b>	<b>(383,765)</b>	<b>(1,276,556)</b>	<b>(112,385)</b>	<b>(728,352)</b>	<b>(236,646)</b>	<b>(627,346)</b>	<b>(3,365,050)</b>
<b>Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2009թ.</b>	<b>1,374,441</b>	<b>1,296,308</b>	<b>40,341</b>	<b>573,505</b>	<b>965,822</b>	<b>600,743</b>	<b>4,851,160</b>
<b>Սկզբնական արժեք/ Վերագնահատված արժեք</b>							
Առ 1 հունվարի 2008թ.	984,496	2,247,170	139,486	1,120,861	145,167	829,020	5,466,200
Ավելացումներ	747,924	321,884	16,211	207,032	277,073	460,823	2,030,947
Օտարումներ	-	(8,634)	(522)	(95,805)	-	(37,739)	(142,700)
<b>Առ 31 դեկտեմբերի 2008թ.</b>	<b>1,732,420</b>	<b>2,560,420</b>	<b>155,175</b>	<b>1,232,088</b>	<b>422,240</b>	<b>1,252,104</b>	<b>7,354,447</b>
<b>Մաշվածություն և արժեզրկումից կորուստներ</b>							
Առ 1 հունվարի 2008թ.	(272,267)	(938,169)	(70,004)	(440,390)	(91,011)	(317,182)	(2,129,023)
Մաշվածության ծախս	(44,366)	(157,765)	(22,556)	(178,610)	(26,018)	(173,040)	(602,355)
Օտարումներ	-	8,634	502	79,782	-	31,667	120,585
<b>Առ 31 դեկտեմբերի 2008թ.</b>	<b>(316,633)</b>	<b>(1,087,300)</b>	<b>(92,058)</b>	<b>(539,218)</b>	<b>(117,029)</b>	<b>(458,555)</b>	<b>(2,610,793)</b>
<b>Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2008թ.</b>	<b>1,415,787</b>	<b>1,473,120</b>	<b>63,117</b>	<b>692,870</b>	<b>305,211</b>	<b>793,549</b>	<b>4,743,654</b>

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հողի և շենքերի իրական արժեքները վերագնահատվել են «Ագատ» ՍՊԸ-ի կողմից իրականացված անկախ գնահատման արդյունքների հիման վրա: Վերագնահատման արդյունքում ստացված հողի և շենքերի իրական արժեքներն էականորեն չէին տարբերվում դրանց հաշվեկշռային արժեքից:

Գնահատումն իրականացվել է կիրառելով ծախսերի և շուկայական արժեքի (համեմատական) մեթոդները: Շուկայական արժեքի մեթոդը հիմնված էր նմանատիպ շենքերի վաճառքի համեմատական տվյալների վերլուծության վրա: Ծախսերի մեթոդի հիմքում ընկած էր նմանատիպ հատկանիշներով շենքերի կառուցման համար պահանջվող փոխարինման արժեքի վերլուծությունը:

Եթե վերագնահատում չիրականացվեր, ապա 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հողի և շենքերի հաշվեկշռային արժեքը կկազմեր 1,433,919 հազար դրամ (31 դեկտեմբերի 2008թ.՝ 1,481,244 հազար դրամ):

## 19 Այլ ակտիվներ

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
Հետաձգված վճարման հաշիվներ	289,123	596,199
Կանխավճարներ	86,374	174,353
Նյութեր և պաշարներ	60,202	71,980
Կանխավճարներ մատակարարներին	28,757	18,776
Փոխհատուցման ենթակա հարկեր, բացառությամբ շահութահարկի	612	26,659
Այլ	98,114	84,945
	<b>563,182</b>	<b>972,912</b>

## 20 Բանկերի ավանդներ և մնացորդներ

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
ՀՀ ԿԲ-ի հետ կնքված հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	3,410,687	8,099,902
Վարկեր բանկերից	697,601	10,336,740
Լորո հաշիվներ	1,172	137,684
Հաշվեզրված տոկոսներ	22,961	20,997
	<b>4,132,421</b>	<b>18,595,323</b>

### Բանկերի ավանդների և մնացորդների կենտրոնացում

2009թ. և 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկում տեղաբաշխված միջոցներ ունեին համապատասխանաբար մեկ և երկու հաճախորդ, որոնց մնացորդները գերազանցում էին բանկերի ընդհանուր ավանդների և մնացորդների 10%-ը: 2009թ. և 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր արժեքը կազմում էր համապատասխանաբար 4,023,550 հազար դրամ և 14,616,742 հազար դրամ:

## 21 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
Ընթացիկ հաշիվներ		
- Անհատներ	35,539,937	21,819,098
- Իրավաբանական անձիք	30,380,318	24,681,454
Ժամկետային ավանդներ		
- Անհատներ	33,344,871	29,738,606
- Իրավաբանական անձիք	11,333,580	8,718,671
Այլ	49,164	209,416
Հաշվեգրված տոկոսներ	739,816	407,483
	<b>111,387,686</b>	<b>85,574,728</b>

### Սառեցված հաշիվներ

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկում հաճախորդների կողմից տեղաբաշխված ավանդների մնացորդները կազմում էին 3,474,853 հազար դրամ (2008թ-ին՝ 3,643,257 հազար դրամ), որոնք Բանկի կողմից սառեցվել էին որպես գրավ տրամադրված վարկերի և արտահաշվեկշռային վարկային գործիքների դիմաց:

### Հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների կենտրոնացում

2009թ. և 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի հաճախորդներ, որոնց մնացորդները գերազանցում էին հաճախորդների ընդհանուր ընթացիկ հաշիվների և ավանդների 10%-ը:

## 22 Այլ փոխառություններ

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
Թողարկված պարտատոմսեր	1,000,000	-
Հաշվեգրված տոկոսներ	86,795	-
	<b>1,086,795</b>	<b>-</b>

## 23 Այլ պարտավորություններ

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
Հաշվեգրված ծախսեր	566,110	379,436
Հետաձգված եկամուտ	349,110	281,860
Հետաձգված վճարման հաշիվներ	289,123	596,199
Ավանդների երաշխավորման հիմնադրամին վճարվելիք գումար	35,425	25,033
Այլ	301,156	396,406
	<b>1,540,924</b>	<b>1,678,934</b>

## 24 Բաժնետիրական կապիտալ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 609,400 սովորական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 12.4 հազար դրամ արժեքով (2008թ-ին՝ 609,400՝ յուրաքանչյուրը 4 հազար դրամ արժեքով): 2009թ. ընթացքում 5,118,960 հազար դրամ գումարը չբաշխված շահույթից փոխանցվեց բաժնետիրական կապիտալ: Արդյունքում, յուրաքանչյուր սովորական բաժնետոմսի անվանական արժեքը 4 հազար դրամից աճեց 12.4 հազար դրամի:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան և ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս - մեկ ձայն սկզբունքով:

### Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով: ՀՀ օրենսդրության համաձայն, հաշվետու ամսաթվի դրությամբ բաշխման ենթակա պահուստները կազմում էին 9,207,431 հազար դրամ (2008թ-ին՝ 12,709,609 հազար դրամ):

Հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը չունի հայտարարված շահաբաժիններ:

## 25 Վերլուծություն ըստ սեգմենտների

Բանկն ունի երեք հաշվետու սեգմենտներ, որոնք հանդիսանում են Բանկի ռազմավարական գործարար միավորները: Ռազմավարական գործարար միավորներն առաջարկում են տարբեր արտադրանք ու ծառայություններ և կառավարվում են առանձին, քանի որ պահանջում են տարբեր տեխնոլոգիաներ ու շուկայավարման ռազմավարություն: Ռազմավարական գործարար միավորներից յուրաքանչյուրի համար ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեն (ԱՊԿԿ) ուսումնասիրում է ներքին կառավարչական հաշվետվությունները՝ առնվազն եռամսյակային կտրվածքով: Ստորև, ամփոփ կերպով ներկայացված են Բանկի յուրաքանչյուր հաշվետու սեգմենտի գործառնությունները:

- Անհատական ֆինանսական ծառայություններ (ԱՖԾ) – ներառում է անհատների համար իրականացվող բանկային գործառնությունները:
- Առևտրավարկային ծառայություններ (ԱՎԾ) – ներառում է ընկերությունների հետ հարաբերությունները, որոնք չեն համապատասխանում Ֆինանսական շուկաներում գործառնությունների սահմանմանը: Այս սեգմենտը ծառայություններ է մատուցում բոլոր ընկերություններին և կորպորացիաներին, առևտրային ձեռնարկություններին, ակումբներին, ընկերակցություններին և ասոցիացիաներին: ԱՎԾ-ն սպասարկում է նաև բոլոր փոքր բիզնեսներին, ներառյալ անհատ ձեռներեցներին:
- Ֆինանսական շուկաներում գործառնություններ (ՖՇԳ) – այս սեգմենտի հաճախորդներն են հանդիսանում խոշոր կորպորացիաները և բանկերը, որոնք ունեն տարաբնույթ ծառայությունների և տարբեր տարածաշրջաններում ՖՇԳ ծառայությունների նկատմամբ զգալի պահանջարկի պոտենցիալ և համարվում են ՖՇԳ հաճախորդներ Էյչ-Էս-Բի-Սի Խմբի կողմից (օրինակ՝ միջազգային կազմակերպություններ, բանկեր, ոչ բանկային ֆինանսական կազմակերպություններ, օդային փոխադրումներով և բեռնափոխադրումներով զբաղվող ընկերություններ և հանքարդյունահանող ընկերություններ):

Ստորև ներկայացված է տեղեկատվություն յուրաքանչյուր հաշվետու սեզոնների վերաբերյալ: Սեզոնների գործունեությունը գնահատվում է հիմք ընդունելով սեզոնների շահույթը մինչև հարկումը, ինչպես ներկայացված է ԱՊԿԿ-ի, Խորհրդի և Էյչ-Էս-Բի-Սի Խմբի գլխամասային գրասենյակի կողմից վերանայվող ներքին կառավարչական հաշվետվություններում: Սեզոնների շահույթը օգտագործվում է գործունեության արդյունքները գնահատելու համար, քանի որ դեկավարությունը գտնում է, որ նման տեղեկատվությունն ամենահարմարն է որոշակի սեզոնների գործունեության արդյունքները՝ տնտեսության նույն ճյուղերում գործող այլ ձեռնարկությունների արդյունքների հետ համեմատելու նպատակով: Միջսեզոնային գները որոշվում են անկախ կողմերի միջև գործարքում:

Ստորև ներկայացված է ակտիվների և պարտավորությունների բացվածքն՝ ըստ սեզոնների:

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>		
Անհատական ֆինանսական ծառայություններ	38,926,907	46,260,470
Առևտրավարկային ծառայություններ	45,883,079	44,844,063
Ֆինանսական շուկաներում գործառնություններ	45,482,011	27,969,807
Չբաշխված ակտիվներ	5,463,823	2,744,503
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>135,755,820</b>	<b>121,818,843</b>
<b>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>		
Անհատական ֆինանսական ծառայություններ	69,364,283	51,639,618
Առևտրավարկային ծառայություններ	39,581,974	27,114,956
Ֆինանսական շուկաներում գործառնություններ	7,190,429	25,710,922
Չբաշխված պարտավորություններ	2,519,555	1,843,958
<b>Ընդամենը պարտավորություններ</b>	<b>118,656,241</b>	<b>106,309,454</b>

*«Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ  
2009թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա  
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ*

Ստորև ներկայացված է սեզմենտների վերաբերյալ տեղեկատվությունը 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

<b>հազ. դրամ</b>	<b>Անհատական ֆինանսական ծառայություններ</b>	<b>Առևտրավարկային ծառայություններ</b>	<b>Ֆինանսական շուկաներում գործառնություններ</b>	<b>Ընդամենը</b>
Արտաքին տոկոսային եկամուտ	4,052,483	5,271,669	830,827	10,154,979
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	1,210,306	865,951	41,989	2,118,246
Ջուտ շահույթ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	-	-	106,551	106,551
Ջուտ շահույթ (վնաս) փոխարժեքային տարբերություններից	423,725	375,444	(969,502)	(170,333)
Ջուտ շահույթ վաճառքի համար մատչելի ակտիվներից	36,987	27,833	17,025	81,845
Այլ գործառնական եկամուտ (ծախս)	(8,498)	31,812	11,579	34,893
Միջսեզմենտային գուտ տոկոսային եկամուտ (ծախս)	1,131,362	(913,928)	(217,434)	-
<b>Հասույթ</b>	<b>6,846,365</b>	<b>5,658,781</b>	<b>(178,965)</b>	<b>12,326,181</b>
Տոկոսային եկամուտ	(1,149,343)	(701,321)	(685,982)	(2,536,646)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	(244,727)	(30,753)	(31,240)	(306,720)
Արժեզրկումից կորուստներ	(348,901)	(54,853)	-	(403,754)
Մաշվածություն և ամորտիզացիա	(553,434)	(183,803)	(47,624)	(784,861)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(3,242,084)	(2,016,101)	(485,228)	(5,743,413)
<b>Սեզմենտի գործունեության արդյունք</b>	<b>1,307,876</b>	<b>2,671,950</b>	<b>(1,429,039)</b>	<b>2,550,787</b>
Շահութահարկի գծով ծախս				(934,005)
<b>Ջուտ շահույթ հարկումից հետո</b>				<b>1,616,782</b>
<b>Այլ սեզմենտային միավորներ</b>				
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ավելացումներ	44,825	58	-	44,883
Չբաշխված ավելացումներ				862,094
<b>Ընդամենը</b>				<b>906,977</b>

*«Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ  
2009թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա  
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ*

Ստորև ներկայացված է սեզմենտների վերաբերյալ տեղեկատվությունը 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

<b>հազ. դրամ</b>	<b>Անհատական ֆինանսական ծառայություններ</b>	<b>Առևտրավարկային ծառայություններ</b>	<b>Ֆինանսական շուկաներում գործառնություններ</b>	<b>Ընդամենը</b>
Արտաքին տոկոսային եկամուտ	3,600,714	4,149,038	1,410,647	9,160,399
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	1,405,058	737,812	48,932	2,191,802
Ջուտ շահույթ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	-	-	63,284	63,284
Ջուտ շահույթ փոխարժեքային տարբերություններից	507,151	270,871	791,922	1,569,944
Ջուտ շահույթ վաճառքի համար մատչելի ակտիվներից	35,253	21,474	59,960	116,687
Այլ գործառնական ծախսեր	(11,492)	(2,139)	(1,815)	(15,446)
Միջսեզմենտային գուտ տոկոսային եկամուտ (ծախս)	389,003	(543,759)	154,756	-
<b>Հասույթ</b>	<b>5,925,687</b>	<b>4,633,297</b>	<b>2,527,686</b>	<b>13,086,670</b>
Տոկոսային եկամուտ	(712,087)	(174,640)	(636,927)	(1,523,654)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	(233,987)	(11,100)	(38,448)	(283,535)
Արժեզրկումից կորուստներ	(157,827)	-	-	(157,827)
Մաշվածություն և ամորտիզացիա	(328,453)	(182,513)	(91,389)	(602,355)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(2,756,852)	(2,077,953)	(715,225)	(5,550,030)
<b>Սեզմենտի գործունեության արդյունք</b>	<b>1,736,481</b>	<b>2,187,091</b>	<b>1,045,697</b>	<b>4,969,269</b>
Շահութահարկի գծով ծախս				(1,055,413)
<b>Ջուտ շահույթ հարկումից հետո</b>				<b>3,913,856</b>
<b>Այլ սեզմենտային միավորներ</b>				
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ավելացումներ	107,156	7,187	480	114,823
Չբաշխված ավելացումներ				1,916,124
<b>Ընդամենը</b>				<b>2,030,947</b>

Տոկոսային ծախսը բաշխվում է յուրաքանչյուր սեզմենտի փաստացի տոկոսային ծախսի հիման վրա: Այլ սեզմենտների գծով գուտ տոկոսային եկամուտը և ծախսն իրենցից ներկայացնում են սեզմենտների միջև իրականացվող վարկավորման ու փոխատվական գործառնություններից ստացված եկամուտը և ծախսը ու որոշվում են կիրառելով շուկայական տոկոսադրույքները:

**Տեղեկատվություն խոշոր հաճախորդների և աշխարհագրական տարածաշրջանի վերաբերյալ**

2009թ. և 2008թ. ընթացքում Բանկը չունեւր այնպիսի արտաքին հաճախորդներ, որոնցից ստացված հասույթը կգերազանցեր արտաքին հաճախորդներից ստացված ընդհանուր հասույթի 10%-ը:

Արտաքին հաճախորդներից ստացված հասույթի մեծ մասը վերաբերում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին: Ոչ ընթացիկ ակտիվների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

## 26 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է բանկային ոլորտի համար և Բանկի գործառնությունների կարևոր տարր է: Բանկի հիմնական ռիսկերը կապված են շուկայական ռիսկի (որը ներառում է գնային, տոկոսադրույքի և արտարժույթի ռիսկերը), ինչպես նաև վարկային ու իրացվելիության ռիսկերի հետ:

### Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Բանկի Տնօրենների խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման համար:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը՝ թե պորտֆելի և թե առանձին գործառնությունների մակարդակով, կառավարվում ու վերահսկվում են Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) կողմից:

### Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Բանկի շահույթի կամ նրա պորտֆելների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, ներառյալ փոխարժեքի դրույքների, տոկոսադրույքների, վարկային սպրեդերի և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի և բաժնային գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների փոփոխությունների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանը ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների, տոկոսադրույքների ժամկետայնության և արտարժույթի դիրքերի գծով, որոնք կանոնավոր կերպով վերահսկվում են:

Բանկի շուկայական ռիսկի կառավարման քաղաքականությունը համապատասխանում է Էյ-Էս-Բի-Սի Խմբի ստանդարտներին:

**Տոկոսադրույքի ռիսկ**

Տոկոսադրույքի ռիսկը շահույթի կամ ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում:

Բանկն ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի հետ կապված գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև այն նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Տոկոսադրույքի ռիսկն առաջանում է, երբ որոշակի ժամկետայնությամբ փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն ժամկետայնությամբ փաստացի կամ կանխատեսված պարտավորություններից:

Ստորև ներկայացված է շուկայական տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 100 տոկոսային կետով (տկ) շահութաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2009թ. ու 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

	2009թ.		2008թ.	
	Շահույթ կամ վնաս հազ. դրամ	Սեփական կապիտալ հազ. դրամ	Շահույթ կամ վնաս հազ. դրամ	Սեփական կապիտալ հազ. դրամ
100 տկ զուգահեռ աճ	330,030	330,030	141,622	141,622
100 տկ զուգահեռ նվազում	(153,077)	(153,077)	(141,563)	(141,563)

Ստորև ներկայացվում է շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունության վերլուծությունը՝ պայմանավորված շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությամբ, որն իրականացվել է 2009թ. ու 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի և 100 տոկոսային կետով (տկ) շահութաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	2009թ.		2008թ.	
	Շահույթ կամ վնաս հազ. դրամ	Սեփական կապիտալ հազ. դրամ	Շահույթ կամ վնաս հազ. դրամ	Սեփական կապիտալ հազ. դրամ
100 տկ զուգահեռ աճ	(15,829)	(93,814)	(19,050)	(128,742)
100 տկ զուգահեռ նվազում	16,931	98,185	20,206	134,066

**Արտարժույթի ռիսկ**

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից: Ծանոթագրություններ 14-ում և 36-ում ներկայացված է լրացուցիչ տեղեկատվություն տարեվերջի դրությամբ արտարժույթի ռիսկին Բանկի ենթարկվածության մասին:

Բանկը կառավարում է իր արտարժույթի ռիսկը՝ սահմանելով բաց դիրքի սահմանաչափեր ըստ արտարժույթի և ծառայությունների տեսակների ու օգտագործելով ածանցյալ գործիքներ: Ի լրումն, սահմանաչափերը սահմանվում են ծառայության յուրաքանչյուր տեսակի համախառն արժեքի և առավելագույն ժամկետի համար:

Սահմանաչափերի նկատմամբ փաստացի դիրքերի վերահսկումը կատարվում է և արդյունքները ներկայացվում են վերադաս դեկավարությանն օրական կտրվածքով:

Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների նկատմամբ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 2009թ. և 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա դիրքերի, ինչպես նաև դրամի ու ԱՄՆ դոլարի և եվրոյի փոխարժեքի 10% փոփոխության պարզեցված սցենարի հիման վրա, հեևյալն է.

	2009թ.		2008թ.	
	Շահույթ կամ վնաս հազ. դրամ	Սեփական կապիտալ հազ. դրամ	Շահույթ կամ վնաս հազ. դրամ	Սեփական կապիտալ հազ. դրամ
ԱՄՆ դոլարի փոխարժեքի 10% արժեվորում դրամի նկատմամբ	21,473	21,473	(238,882)	(238,882)
ԱՄՆ դոլարի փոխարժեքի 10% արժեզրկում դրամի նկատմամբ	(21,473)	(21,473)	238,882	238,882
Եվրոյի փոխարժեքի 10% արժեվորում դրամի նկատմամբ	3,067	3,067	7,015	7,015
Եվրոյի փոխարժեքի 10% արժեզրկում դրամի նկատմամբ	(3,067)	(3,067)	(7,015)	(7,015)

### **Վարկային ռիսկ**

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ վարկառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել Բանկի նկատմամբ ստանձնած իր պարտականությունները: Բանկը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը (թե՛ հաշվեկշռային և թե՛ արտահաշվեկշռային) կառավարելու համար: Բանկի վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Խորհրդի կողմից:

Բանկի վարկային քաղաքականությունը համապատասխանում է Էյչ-Էս-Բի-Սի Խմբի ստանդարտներին:

Բանկի վարկային քաղաքականությունը սահմանում է.

- վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- ապահովագրական ընկերությունների գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկային փաստաթղթերի պահանջները,
- վարկերի/այլ վարկային գործիքների և գրավի շարունակական վերահսկման ընթացակարգերը:

Վարկային առաջարկը (որը ներառում է վարկառուի մասին տվյալները, գործունեության նկարագրությունը, վարկի նպատակը, պայմանները, տոկոսադրույքը և մարման ժամանակացույցը, վարկի դասը, վարկային պատմությունը, ապահովվածությունը/գրավը և այլ տվյալները) լրացվում, հաստատվում և արխիվացվում են էլեկտրոնային ձևով՝ CARM (Վարկերի հաստատման և գնահատման համակարգ) համակարգի միջոցով: Վարկային առաջարկները պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող վարկային մենեջերների կողմից և հաստատվում Առևտրավարկային վարչության կառավարչի կամ

Գլխավոր գործադիր տնօրենի կողմից՝ հաստատված սահմանաչափերի շրջանակներում: Նշված հաստատված սահմանաչափերից շեղումների դեպքում, վարկային առաջարկները ներկայացվում են հաստատման Էյչ-Էս-Բի-Սի Բանկ HBEU Credit & Risk-ի կողմից:

Վարկային ծառայություններին վերաբերվող բոլոր իրավաբանական պայմանագրերը պատրաստվում և փոփոխվում են CARM համակարգով հաստատված վարկային դիմումների հիման վրա: Պայմանագրերը պատրաստելիս օգտագործվում են Բանկի իրավաբանական վարչության կողմից հաստատված պայմանագրային ձևերը: Իրավաբանական փաստաթղթերը պատրաստվում են Վարկային գործառնությունների բաժնի իրավաբանների կողմից՝ Վարկային գործառնությունների կառավարչի անմիջական վերահսկողության ներքո և օժանդակությամբ:

Բանկը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերազնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վարկառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Գրավի ներկա շուկայական արժեքը կանոնավոր կերպով գնահատվում է կամ անկախ գնահատողի կամ Բանկի մասնագետների կողմից: Շուկայական գների բացասական շարժի դեպքում վարկառուից որպես կանոն պահանջվում է լրացուցիչ արժեքների գրավադրում:

Անհատների կողմից ներկայացվող վարկային դիմումները դիտարկվում են ԱՖԾ վարկավորման բաժնի կողմից՝ Խորհրդի կողմից հաստատված անհատների վարկավորման քաղաքականությամբ սահմանված չափանիշների հետ համապատասխանությունը ստուգելու միջոցով:

Բանկը վերահսկում է վարկային ռիսկի կենտրոնացումն ըստ արդյունաբերության ճյուղերի/ուղղությունների և աշխարհագրական դիրքի:

Համախառն ներքին արդյունքի էական նվազումը Հայաստանի տնտեսությունում, որը սկսվեց 2008 վերջում, և դրամի արժեզրկումը 2009թ. մարտին զգալի ազդեցություն ունեցան Հայաստանի գործարար միջավայրի վրա: Այս հանգամանքներով պայմանավորված՝ Բանկը սկսեց կիրառել վարկավորման ավելի պահպանողական քաղաքականություն 2009թ. ընթացքում:

Բանկի հաշվեկշռային վարկային ռիսկի առավելագույն չափը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքում՝ հաշվապահական հաշվեկշռում:

Ստորև ներկայացված է հաշվեկշռային վարկային ռիսկի առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>		
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	13,782,768	12,205,318
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	35,812,145	17,308,288
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	836,795	818,277
Հաճախորդներին տրված վարկեր	65,270,512	72,945,634
Վաճառքի համար մատչելի պարտքային ակտիվներ	8,309,639	8,006,924
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	96,988	607,368
Այլ ակտիվներ	289,123	596,199
<b>Հաշվեկշռային վարկային ռիսկի ընդհանուր առավելագույն չափը</b>	<b>124,397,970</b>	<b>112,488,008</b>

Հաճախորդներին տրված վարկերի գծով վարկային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 15-ում:

Արտահաշվեկշռային վարկային ռիսկի առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է ծանոթագրություն 28-ում:

### **Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Բանկը կունենա դժվարություններ՝ իր պարտավորվածությունները կատարելու համար միջոցներ հայթայթելիս: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ու տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ոչ ամբողջական համապատասխանությունը բնական է ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների անորոշ ժամկետներով և տարաբնույթությամբ: Դա հնարավորություն է տալիս բարձրացել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է ԱՊԿԿ կողմից:

Բանկը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է թողարկվող պարտքային արժեթղթերը, այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը, իրավաբանական անձանց և անհատների ավանդները, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու հեշտությամբ բավարարելու նպատակով:

Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է.

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում՝ ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների այս հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքերի ֆինանսավորման ծրագրերի ապահովում,
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման ծրագրերի անընդհատության ապահովում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Գանձապետարանը բաժանմունքներից ստանում է տեղեկատվություն ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի ու ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ: Այնուհետև, Գանձապետարանը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է կարճաժամկետ, իրացվելի, առևտրային նպատակներով պահվող արժեթղթերից, բանկերում տեղաբաշխված միջոցներից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ Բանկում:

Գանձապետարանը վերահսկում է իրացվելիության դիրքը օրական կտրվածքով և իրականացնում է կանոնավոր «սթրես-թեսթեր» իրացվելիության գծով՝ շուկայի սովորական և ավելի խիստ պայմանների տեսանկյունից: Սովորական շուկայական պայմաններում Բանկի իրացվելիության դիրքի վերաբերյալ տեղեկատվություն ներառող հաշվետվությունները ներկայացվում են վերադաս դեկավարությանը շաբաթական կտրվածքով: Բանկի իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացնում է ԱՊԿԿ-ի կողմից, իսկ այդ որոշումներն կատարվում են Գանձապետարանի կողմից:

Բանկը հաշվարկում է նաև իրացվելիության պարտադիր ցուցանիշներ օրական կտրվածքով՝ ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն: 2009թ. և 2008թ. ընթացքում Բանկի իրացվելիության ցուցանիշները համապատասխանում էին սահմանված ցուցանիշներին:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է դրամական միջոցների չգեղջված հոսքերը ֆինանսական պարտավորությունների և չճանաչված վարկային պարտավորվածությունների գծով՝ ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված ներհոսքի և արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է դրամական միջոցների պայմանագրային չգեղջված հոսքերը ֆինանսական ակտիվների, պարտավորությունների կամ պարտավորվածությունների գծով: Այս ֆինանսական ակտիվներից ու պարտավորություններից և չճանաչված վարկային պարտավորվածություններից Բանկի կողմից ակնկալվող դրամական միջոցների հոսքերը կարող են էականորեն տարբերվել այս վերլուծությունից:

*«Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ  
2009թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա  
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ*

Իրացվելության դիրքը 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն էր.

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռային արժեք
<b>Ոչ ածանցյալ պարտավորություններ</b>							
Բանկերի ավանդներ և մնացորդներ	3,296,589	144,121	51,798	846,522	-	4,339,030	4,132,421
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	75,684,580	10,766,106	23,779,178	2,024,328	-	112,254,192	111,387,686
Այլ փոխառություններ	1,090,000	-	-	-	-	1,090,000	1,086,795
Այլ պարտավորություններ	547,921	636,153	5,565	-	2,175	1,191,814	1,191,814
<b>Ընդամենը պարտավորություններ</b>	<b>80,619,090</b>	<b>11,546,380</b>	<b>23,836,541</b>	<b>2,870,850</b>	<b>2,175</b>	<b>118,875,036</b>	<b>117,798,716</b>
<b>Վարկավորման պարտավորվածություններ և երաշխիքներ</b>	<b>14,864,100</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>14,864,100</b>	<b>14,864,100</b>

Իրացվելության դիրքը 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն էր.

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռային արժեք
<b>Ոչ ածանցյալ պարտավորություններ</b>							
Բանկերի ավանդներ և մնացորդներ	16,701,315	51,703	1,701,489	505,660	-	18,960,167	18,595,323
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	57,198,076	8,627,814	15,335,022	5,140,279	84,446	86,385,637	85,574,728
Այլ պարտավորություններ	1,057,143	232,044	107,887	-	-	1,397,074	1,397,074
<b>Ընդամենը պարտավորություններ</b>	<b>74,956,534</b>	<b>8,911,561</b>	<b>17,144,398</b>	<b>5,645,939</b>	<b>84,446</b>	<b>106,742,878</b>	<b>105,567,125</b>
<b>Վարկավորման պարտավորվածություններ և երաշխիքներ</b>	<b>23,591,150</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>23,591,150</b>	<b>23,591,150</b>

Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով Բանկը պահում է իրացվելի ակտիվներ, բաղկացած դրամական միջոցներից և դրանց համարժեքներից ու կառավարության պարտատոմսերից, որոնց համար գործում է իրացվելի շուկա: Այս ակտիվները կարող են հեշտությամբ վաճառվել՝ իրացվելիության պահանջները բավարարելու նպատակով: Այդ իսկ պատճառով, Բանկը անհրաժեշտ չի գտնում ներկայացնել այս ակտիվների ժամկետայնության վերլուծությունը՝ օգտագործողների կողմից իրացվելիության ռիսկի չափը և բնույթը գնահատելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով Բանկի կողմից կիրառվող հիմնական միջոցը իրացվելի ակտիվների ու ընդհանուր ակտիվների և իրացվելի ակտիվների ու ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունների որոշումն է: Այս նպատակով իրացվելի ակտիվները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, կառավարության պարտատոմսերը, կառավարության պարտատոմսերի գրավով հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները, որոնք գրավադրված չեն կամ որոնց օգտագործումն այլ կերպ սահմանափակված չէ: Ստորև ներկայացված են նշված հարաբերակցությունները հաշվետու ամսաթվի դրությամբ:

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
Առ 31 դեկտեմբերի		
Իրացվելի ակտիվների ու ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը	36%	26%
Իրացվելի ակտիվների ու ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունը	70%	71%

Վերը նշված հարաբերակցությունները կիրառվում են նաև ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված իրացվելիության սահմանաչափերի հետ համապատասխանությունը գնահատելու համար:

## **27 Կապիտալի կառավարում**

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Բանկը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ վարկավորող կազմակերպությունների կապիտալի համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում էր 12%: 2009թ. և 2008թ. ընթացքում Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր սահմանված մակարդակին:

## 28 Պարտավորվածություններ

Բանկը ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Այս պարտավորվածություններն իրենցից ներկայացնում են հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների գծով պարտավորվածություններ:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ՝ հաճախորդների պարտավորությունների կատարումն երրորդ անձանց հանդեպ երաշխավորելու նպատակով: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են պարտավորվածությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են: Աղյուսակում ներկայացված երաշխիքները և ակրեդիտիվները ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կգրանցվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չիրականացնեն իրենց կողմից ստանձնած պարտավորությունները:

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
<b>Պայմանագրային գումար</b>		
Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ	8,541,976	9,893,210
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	3,449,589	2,667,094
Վարկային քարտերի գծով պարտավորվածություններ	2,771,011	2,706,226
Չօգտագործված օվերդրաֆտներ	83,524	8,324,620
	<b>14,864,100</b>	<b>23,591,150</b>

Վարկավորման վերը ներկայացված ընդհանուր պարտավորվածությունները չեն ենթադրում դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս պարտավորվածությունների մեծամասնությունը կարող է ուժը կորցնել կամ դադարել գործել մինչև վերջիններիս կատարման ժամկետը:

## 29 Գործառնական վարձակալություն

**Վարձակալություն, որտեղ Բանկը հանդես է գալիս որպես վարձակալ**

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարները հետևյալն են.

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
Մինչև մեկ տարի ժամկետով	400,132	428,177
Մեկից հինգ տարի ժամկետով	800,087	1,085,694
Ավելի քան հինգ տարի ժամկետով	341,020	481,698
	<b>1,541,239</b>	<b>1,995,569</b>

Բանկը վարձակալում է մի շարք տարածքներ և սարքավորումներ գործառնական վարձակալության պայմաններով: Վարձակալության սկզբնական ժամկետը սովորաբար կազմում է հինգից տաս տարի՝ այդ ժամկետից հետո վարձակալության պայմանագիրը նորացնելու հնարավորությամբ: Վարձավճարների չափը սովորաբար ավելանում է տարեկան կտրվածքով՝ շուկայի միտումներն արտացոլելու նպատակով: Այս վարձակալություններից ոչ մեկը պայմանական ռենտա չի ներառում:

2009թ. ընթացքում գործառնական վարձակալության գծով ճանաչվել է 448,478 հազար դրամ գումարով ծախս շահույթում կամ վնասում (2008թ-ին՝ 431,918 հազար դրամ):

### **30 Պայմանական դեպքեր**

#### **Իրավական պարտավորություններ**

Բանկի դեկավարությունը տեղյակ չէ Բանկի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

#### **Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ**

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է հարկերի բազմազանությամբ և հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ հստակ չէ, հակասական է և պահանջում է մեկնաբանություններ հարկային մարմինների կողմից: Հաճախ տարբեր իրավասու մարմինները տալիս են տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության իրավասու մարմինների կողմից, որոնց օրենքով իրավունք է վերապահված կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային տարին ենթակա է ստուգման հարկային մարմինների կողմից հաջորդ երեք օրացուցային տարիների ընթացքում:

Այս փաստերը կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել Հայաստանի Հանրապետությունում: Բանկի դեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանումներ:

## 31 Գործարքներ կապակցված կողմերի հետ

### Վերահսկողություն

Բանկի մայր ընկերությունն է հանդիսանում Էյչ-Էս-Բի-Սի Յուրըփ Բի Վի-ն: Բանկի վերջնական վերահսկող կողմն է համարվում Էյչ-Էս-Բի-Սի Հոլդինգս Փի-Էլ-Սի-ն: Վերահսկողության իրավունք ունեցող հաջորդ ընկերությունը, որը պատրաստում է հանրությանը հասանելի հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ՝ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Փի-Էլ-Սի-ն է:

### Գործարքներ Տնօրենների խորհրդի և ղեկավարության անդամների հետ

Ստորև ներկայացված են տնօրենների և գործադիր պաշտոնյաների հետ գործարքների մնացորդներն ու միջին տոկոսադրույքները 2009թ. և 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2009թ. հազ. դրամ	Միջին տոկոսադրույք, %	2008թ. հազ. դրամ	Միջին տոկոսադրույք, %
<b>Ակտիվներ</b>				
Հաճախորդներին տրված վարկեր	893,383	5.0%	744,147	4.7%
<b>Պարտավորություններ</b>				
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	656,807	2.3%	357,983	1.6%

Ստորև ներկայացված են շահույթում կամ վնասում ներառված տնօրենների և գործադիր պաշտոնյաների հետ գործարքների գծով արտացոլված գումարները:

	2009թ. հազ. դրամ	2008թ. հազ. դրամ
<b>Շահույթ կամ վնաս</b>		
Տոկոսային եկամուտ	43,398	30,711
Տոկոսային ծախս	(3,337)	(2,599)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	1,627	971
Աշխատակիցների հատուցումներ – ղեկավարություն	(687,020)	(639,642)
Վնաս արտաբժույթի առք ու վաճառքի պայմանագրերից	(4,208)	-

### Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Այլ կապակցված կողմերը ներառում են Բանկի վերջնական վերահսկող կողմի ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունները և ղեկավարության հետ կապակցված այլ կողմերը: Ստորև ներկայացված են այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները, համապատասխան միջին տոկոսադրույքները և այլ գործարքները 2009թ. և 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	<u>2009թ. հազ. դրամ</u>	<u>Միջին տոկոսադրույք, %</u>	<u>2008թ. հազ. դրամ</u>	<u>Միջին տոկոսադրույք, %</u>
<b>Ակտիվներ</b>				
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	23,840,385	0.2%	8,371,913	0.3%
Արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրեր	35,984	-	60,373	-
<b>Պարտավորություններ</b>				
Բանկերի ավանդներ և մնացորդներ	97,601	4.2%	7,199,817	1.6%
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	339,727	0.0%	165,512	0.1%
<b>Արտահաշվեկշռային հոդվածներ</b>				
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	-	-	3,480	-
Արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրեր – պայմանական գումարներ	2,885,533	-	2,782,769	-
<b>Այլ գործարքներ</b>				
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ավելացումներ	<u>793,166</u>		<u>167,962</u>	

Ստորև ներկայացված են շահություն կամ վնասում այլ կապակցված կողմերի հետ գործարքների գծով արտացոլված գումարները:

	<u>2009թ. հազ. դրամ</u>	<u>2008թ. հազ. դրամ</u>
<b>Շահույթ կամ վնաս</b>		
Տոկոսային եկամուտ	62,579	86,132
Տոկոսային ծախս	(10,621)	(160,952)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	2,878	1,497
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	(32,370)	(21,647)
Այլ եկամուտ	91,728	40,453
Էյչ-Էս-Բի-Սի Խմբի ՏՏ աջակցման և այլ ծախսեր	(1,297,263)	(618,191)
Մասնագիտական ծառայություններ	-	(10,485)
Այլ վարչական ծախսեր	<u>(61,392)</u>	<u>(46,016)</u>

## 32 Գրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դեկտեմբերի 31 դրությամբ գրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում արտացոլված գրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած էին հետևյալ հոդվածներից.

	<b>2009թ. հազ. դրամ</b>	<b>2008թ. հազ. դրամ</b>
Գրամական միջոցներ	6,056,296	4,103,680
Բանկերում տեղաբաշխված միջոցներ – նոստրո հաշիվներ	21,240,249	16,521,671
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	13,782,768	12,205,318
Որպես բանկային քարտերի դիմաց գրավ՝ ՀՀ ԿԲ-ում պահվող գումարներ	(522,168)	(466,814)
	<b>40,557,145</b>	<b>32,363,855</b>

## 33 Ֆինանսական գործիքների իրական արժեք

Վաճառքի համար մատչելի գնանշվող ակտիվների իրական արժեքը գնահատվել է հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշվող շուկայական գների հիման վրա՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները:

Բոլոր այլ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները, բացառությամբ ստորև ներկայացվածների, հաշվարկվում են կիրառելով գրամական միջոցների գեղջված հոսքերի մեթոդիկան՝ հիմնված գրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա՝ օգտագործելով հաշվետու ամսաթվի դրությամբ մնանատիպ պայմաններով գործիքի նկատմամբ կիրառելի գեղջման դրույքը: Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 16-ում, 32,076 հազար դրամ (2008թ-ին՝ 31,919 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով չգնանշվող բաժնային արժեթղթերի իրական արժեքը հնարավոր չէ որոշել:

Բոլոր ֆինանսական գործիքների, բացառությամբ վաճառքի համար մատչելի չգնանշվող բաժնային արժեթղթերի, գնահատված իրական արժեքը մոտավորապես հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին:

Ստորև աղյուսակում ներկայացված է իրական արժեքով գրանցված ֆինանսական գործիքների վերլուծությունը, որոնց իրական արժեքը հիմնված է գնանշվող շուկայական գների վրա կամ հաշվարկվում է շուկայի դիտարկելի տվյալների վրա հիմնված գնահատման մեթոդիկայի միջոցով՝ 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	<b>Գնանշված շուկայական գին հազ. դրամ</b>	<b>Շուկայի դիտարկելի տվյալների վրա հիմնված գնահատման մեթոդիկա հազ. դրամ</b>
<b>Ֆինանսական ակտիվներ</b>		
Առևտրային նպատակներով պահվող արժեթղթեր	-	795,936
Աժանցյալ ֆինանսական գործիքներ	-	40,859
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	-	8,309,639

Ստորև աղյուսակում ներկայացված է իրական արժեքով գրանցված ֆինանսական գործիքների վերլուծությունը, որոնց իրական արժեքը հիմնված է գնանշվող շուկայական գների վրա կամ հաշվարկվում է շուկայի դիտարկելի տվյալների վրա հիմնված գնահատման մեթոդիկայի միջոցով՝ 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

<b>Ֆինանսական ակտիվներ</b>	<b>Գնանշված շուկայական գին հազ. դրամ</b>	<b>Շուկայի դիտարկելի տվյալների վրա հիմնված գնահատման մեթոդիկա հազ. դրամ</b>
Առևտրային նպատակներով պահվող արժեթղթեր	-	739,261
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	-	79,016
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	74,869	8,006,924

2009թ. և 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չուներ այնպիսի ֆինանսական գործիքներ, որոնց իրական արժեքը որոշելու համար կիրառվել էր ոչ շուկայական դիտարկելի տվյալների օտագործումն ենթադրող գնահատման մեթոդիկա:

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գումարը, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրազեկ, պատրաստակամ և անկախ կողմերի միջև գործարքում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես իրացվելի՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների մարման ժամանակ:

## 34 Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են 2009թ. և 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են մինչև այս ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը, բացառությամբ 35,657,459 հազար դրամ գումարով (2008թ-ին՝ 31,048,803 հազար դրամ) հաճախորդներին տրված վարկերի, որոնց նկատմամբ կիրառվում է լողացող տոկոսադրույք՝ ցպահանջ հիմունքով (դրույքը փոխկապակցված է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հետգնման պայմանագրերի դրույքի հետ՝ ՀՀ դրամով արտահայտված վարկերի համար և ԱՄՆ Ֆեդերալ պահուստային համակարգի կողմից սահմանված դրույքի հետ՝ ԱՄՆ դոլարով արտահայտված վարկերի համար) և 2,358,267 հազար դրամ գումարով (2008թ-ին՝ 2,501,464 հազար դրամ) աշխատակիցներին տրված վարկերի, որոնց նկատմամբ կիրառվող տոկոսադրույքները վերանայվում են տարեկան կտրվածքով (հաջորդ վերանայումը տեղի կունենա 2010թ. մարտի 31-ին):

	2009թ.			2008թ.		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
<b>Տոկոսակիր ակտիվներ</b>						
Բանկերում տեղաբաշխված միջոցներ						
- Նոստրո հաշիվներ	-	-	0.1%	-	-	2.3%
- Վարկեր և ավանդներ	5.0%	0.2%	0.6%	-	9.6%	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ						
Հաճախորդներին տրված վարկեր	12.7%	13.3%	15.8%	13.1%	12.4%	13.1%
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	7.7%	-	-	7.0%	-	-
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	5.7%	-	-	7.1%	-	-
<b>Տոկոսակիր պարտավորություններ</b>						
Բանկերի ավանդներ և մնացորդներ						
- Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	5.1%	-	-	7.3%	-	-
- Վարկեր բանկերից	8.3%	-	4.2%	7.4%	2.9%	4.2%
- Լորո հաշիվներ	-	-	-	1.5%	-	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ						
- Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ	0.02%	0.05%	0.03%	0.1%	0.3%	0.1%
- Ժամկետային ավանդներ	8.0%	3.4%	1.1%	5.0%	3.7%	2.1%
Այլ փոխառություններ	9.0%	-	-	-	-	-

## 35 Ժամկետայնության վերլուծություն

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 31 դեկտեմբերի 2009թ. դրությամբ ակտիվների և պարտավորությունների պայմանագրով նախատեսված մինչև մարումն ընկած ժամանակահատվածը:

ԱԿՏԻՎՆԵՐ	Ժամկետանց	Մինչև	1-ից	3-ից	1-ից	Ավելի քան	Անժամկետ	Ընդամենը
	հազ. դրամ	1 ամիս	3 ամիս	12 ամիս	5 տարի	5 տարի		
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Գրանական միջոցներ	-	6,056,296	-	-	-	-	-	6,056,296
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	-	13,782,768	-	-	-	-	-	13,782,768
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	-	35,384,188	116,289	311,668	-	-	-	35,812,145
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող	-	11,382	-	39,605	687,336	98,472	-	836,795
Հաճախորդներին տրված վարկեր	1,752,239	3,153,936	6,384,962	15,619,103	31,559,678	6,800,594	-	65,270,512
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	-	106,725	18,269	3,122,114	4,909,239	153,292	32,076	8,341,715
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	-	-	96,988	-	-	-	-	96,988
Ընթացիկ հարկային ակտիվ	-	25,000	-	119,259	-	-	-	144,259
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	-	4,851,160	4,851,160
Այլ ակտիվներ	4,492	191,152	236,271	71,065	-	-	60,202	563,182
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>1,756,731</b>	<b>58,711,447</b>	<b>6,852,779</b>	<b>19,282,814</b>	<b>37,156,253</b>	<b>7,052,358</b>	<b>4,943,438</b>	<b>135,755,820</b>
<b>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>								
Բանկերի ավանդներ և մնացորդներ	-	3,292,458	141,346	1,016	697,601	-	-	4,132,421
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	75,651,291	10,680,476	23,214,349	1,841,570	-	-	111,387,686
Այլ փոխառություններ	-	1,086,795	-	-	-	-	-	1,086,795
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-	-	-	-	508,415	508,415
Այլ պարտավորություններ	-	602,366	690,987	135,944	109,452	2,175	-	1,540,924
<b>Ընդամենը պարտավորություններ</b>	<b>-</b>	<b>80,632,910</b>	<b>11,512,809</b>	<b>23,351,309</b>	<b>2,648,623</b>	<b>2,175</b>	<b>508,415</b>	<b>118,656,241</b>
<b>Չուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2009թ.</b>	<b>1,756,731</b>	<b>(21,921,463)</b>	<b>(4,660,030)</b>	<b>(4,068,495)</b>	<b>34,507,630</b>	<b>7,050,183</b>	<b>4,435,023</b>	<b>17,099,579</b>
Չուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2008թ.	165,724	(37,804,703)	(779,674)	(1,398,561)	41,288,341	9,111,348	4,926,914	15,509,389
<b>Կուտակային զուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2009թ.</b>	<b>1,756,731</b>	<b>(21,164,732)</b>	<b>(24,824,762)</b>	<b>(28,893,257)</b>	<b>5,614,373</b>	<b>12,664,556</b>	<b>17,099,579</b>	<b>17,099,579</b>
Կուտակային զուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2008թ.	165,724	(37,638,979)	(38,418,653)	(39,817,214)	1,471,127	10,582,475	15,509,389	15,509,389

Աղյուսակում ներկայացված գումարներն իրենցից ներկայացնում են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները հաշվետու ամսաթվի դրությամբ և չեն ներառում տոկոսների ապագա վճարումները: Քանի որ ֆինանսական գործիքների մեծ մասը ֆիքսված դրույքով պայմանագրեր են, մինչև պայմանագրային մարմանը մնացած ժամանակահատվածները ներկայացնում են նաև պայմանագրային տոկոսադրույքի վերանայման ամսաթվերը, բացառությամբ ծանոթագրություն 34-ում ներկայացվածի:

«Ժամկետանց» սյունակում ներառված է ֆինանսական գործիքների միայն պայմանագրով նախատեսված ժամկետանց մասը:

Գեկավարությունը գտնում է, որ չնայած ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով թույլատրվող անհատների ժամկետային ավանդների ժամկետից շուտ ելքագրման հնարավորությանը, այս հաճախորդների հաշիվների տարբերակվածությունն ըստ քանակի և տեսակի ու Բանկի նախկին փորձը վկայում են, որ դրանք հանդիսանում են ֆինանսավորման երկարաժամկետ ու կայուն աղբյուր:

## 36 Ակտիվները և պարտավորություններն ըստ արժույթների

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	<u>ՀՀ դրամ հազ. դրամ</u>	<u>ԱՄՆ դոլար հազ. դրամ</u>	<u>Եվրո հազ. դրամ</u>	<u>Այլ արտարժույթ հազ. դրամ</u>	<u>Ընդամենը հազ. դրամ</u>
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>					
Դրամական միջոցներ	3,279,903	2,292,506	320,377	163,510	6,056,296
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	2,466,763	9,352,825	1,963,180	-	13,782,768
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	82,438	22,509,756	11,319,840	1,900,111	35,812,145
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	836,795	-	-	-	836,795
Հաճախորդներին տրված վարկեր	26,717,058	38,093,755	459,699	-	65,270,512
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	8,340,922	-	793	-	8,341,715
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	96,988	-	-	-	96,988
Ընթացիկ հարկային ակտիվ	144,259	-	-	-	144,259
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	4,851,160	-	-	-	4,851,160
Այլ ակտիվներ	223,938	107,339	200,675	31,230	563,182
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>47,040,224</b>	<b>72,356,181</b>	<b>14,264,564</b>	<b>2,094,851</b>	<b>135,755,820</b>
<b>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>					
Բանկերի ավանդներ և մնացորդներ	4,032,808	448	99,026	139	4,132,421
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	20,739,397	74,884,237	13,937,277	1,826,775	111,387,686
Այլ փոխառություններ	1,086,795	-	-	-	1,086,795
Հետաձգված հարկային պարտավորություն	508,415	-	-	-	508,415
Այլ պարտավորություններ	1,167,908	162,298	197,592	13,126	1,540,924
<b>Ընդամենը պարտավորություններ</b>	<b>27,535,323</b>	<b>75,046,983</b>	<b>14,233,895</b>	<b>1,840,040</b>	<b>118,656,241</b>
<b>Ջուտ հաշվեկշռային դիրքը առ 31 դեկտեմբերի 2009թ.</b>	<b>19,504,901</b>	<b>(2,690,802)</b>	<b>30,669</b>	<b>254,811</b>	<b>17,099,579</b>
<b>Ջուտ արտահաշվեկշռային դիրքը առ 31 դեկտեմբերի 2009թ.</b>	<b>(2,905,533)</b>	<b>2,905,533</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>
<b>Ջուտ հաշվեկշռային և արտահաշվեկշռային դիրքերը առ 31 դեկտեմբերի 2009թ.</b>	<b>16,599,368</b>	<b>214,731</b>	<b>30,669</b>	<b>254,811</b>	<b>17,099,579</b>
Ջուտ հաշվեկշռային և արտահաշվեկշռային դիրքերը առ 31 դեկտեմբերի 2008թ.	17,828,046	(2,388,811)	70,154	-	15,509,389